


Llin
✓374




19.99

4413

**Ա.ԲԲՈՅ.3 ՄԻՒԹԱՐԱ.3 ՎԱՐԴԱՊԵՏԻ
Ա.ՐԱ.ՐԵԱԼ**

ՊԱՏՅԱՆԻՔ ՈՐՔ ԱՌԵԲԻՄ ԸՆԴՀԱԿՄ ՆՈՑԻՆ, ՈՐՔ
ԱՍԽՆ ԹԷ ՈՉ ԵՐԲԻՔ ՊԱՐՏ Է ԳՆԱԼ ՈՒՂՂԱՓԱ-
ԹԱՑ Ի ԺԱՄԿ ՀԱՅՈՑ



ՀՐԱՏԱՐԵՎԵՑՑԻ ԽՄ ՇԱԽՔՈՎԸ

ՀՈՒԿԱՍ Վ.Ա.ՐԴԱՂԵՑ ՏԵՐԵՂԵՄՆԵՐ

ԿԵՐԵԿՈՐ ՇԱՆՈԹԱԴՐԵՆՆԵՐՈՒ



Բ ԶՄԻՒՌՆԻԱ.


Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԲԱՐՁ ՏԵՏԵՄՆ

1879

3658

ԱՐԲԱՑ ՄԽԻԹԱՐԱՅԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՊԱՏՃԱՌՔ



নৃত্য উপর কে প্রধানমুখ্য ব্যক্তিগত
প্রদর্শন করে দেখা গুলি আসন্ন সময়ে

• *A. Grusonius*



ԱՐԲԱՅ ՄԻԼԹԱՐԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Ա.Ի.Ա.ՐԵԱԼ.



ՊԱՏՃԱՌԻ ՈՐՔ ԱԹԵՐԵՐԻՆ ԸՆԴՀԱՄ ՆՈՑԻՆ, ՈՐՔ
ԱՍԵՆ ԹԷ ՈՉ ԵՐԲՔ ՊԱՐՏ Է ԳՆԱԼ ՈՒՂՂԱՓԱ-
ՌԱՑ Ի ԺԱՄԻ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱԿԵՑ ԻՒՐ ԽԱԽԻԳՈՎԸ

ԴՐԱԿԱՆԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՏԵՐՏԻԿԵՑ

ԿԱՐԵՒՈՐ ԽԵՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

№ 144



Ի ԶՄԻՒՆԻԱԼ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԲԱՐՑ ՏԵՏԵԱՆ

1879

ՅԱՐԱՋՄԱՆ

Միմիթարեան Միաբանութեան երանաշնորհ հիմնադրին մէկ զրութիւնը որ ցարդ հրատարակուած չէ, առաջին անգամ տպագրութեամբ ի լոյս ընծայելու ատեն նպատակնիս ուրիշ բան չէ, եթէ ոչ տալ պատմագրաց այն կարեսը յիշատակարանը, որուն պակաելովը պատմութեան մէկ դէպքը մժութեան մէջ մնացած է։ Այս գրուածքին ստուգիւ Միմիթարայ Աբբահօր գրչէն ելած ըլլալը, գոնէ ըստ մեզ, տարակոյս չկերցըներ։ Կախ շարադրութիւնը և հայերէնին ոճը ասոր ապացոյց մի է։ Երկրորդ մէջի փաստերը՝ որ կը միանան ըստ ամենայնի նոյն հիմնադրին առ Ա. Ժողովը Ռոբականտայու 1721ին Փետրուարի 22ին գրած նամակին փաստերուն հետ, և որուն Միմիթարայ գրութիւնն ըլլալուն տարակոյս չկայ։ Երդէն Աննասյի Միմիթարեանց զրատունը պահուած և Միմիթարայ ժամանակակից ժամանակադրութիւնէ մը (Զեռագիր, թիւ 195.) գիտէինք, թէ Միմիթար 1718ին իւր Միաբանութեան գործոցը համար Հռոմ գտնուած ժամանակը, Կարդինալ Դանարային առաջարկութեամբը, զրուածք մը գրած է, Հայոց եկեղեցիները երթալու խրնացոյն վրայ և նոյն գրուածքը Ա. Ժողովքին տուած է։*

* Աւասիկ այս ձեռագիր ժամանակադրութեան խօսքը. «1718, Կարդինալ Դանարայն, որ ինամարկու էր իրակութեան մերւմ զրբ պատմցաք, Էարկ առաջի Աբբահօրն զինդիրն վասն գնալոյ ուղղամիտուաց յեկեղեցին Հայոց։ Եւ աբար ի վերայ ինսդրոյն այնորին զգործի զգործի մի, և մատոց Աբբաս Ժողովը 1721ին գրած թղթին մէջն ալ։

28. 1371

41324. ԱՅ

Եթէ այս գրուածքը Ա. Ժաղովքին դիւանէն ելած և ի լյս ընծայուած ըլլար, մեր հրատարակած գրուածքին և անոր մէջի փաստերուն միարանութեան վրայ աւելի կրոնայինք խօսիլ. սակայն այս ետքինը մեր ձեռքը չունինք, ու մինակ պատմութենէ զիտենք:

Հիմա կը մնայ մեզի խօսիլ այն գէպքերուն վրայ, որոնք Միսիթարայ Արքահօր երէք գրութեանցը պատմառ եղած են. այսինքն կուղենք ըսել, նախ՝ առ. Ա. Ժաղովի տուած յիշատակագրոյն (1718երորդ տարին), երկրորդ՝ առ. նոյն Ա. Ժաղովի գրած նամակին (1721ին Փետրուարի 22ին), և երրորդ՝ մեր ի լյս ընծայած գրութեանը, որուն թուականն է 1733, Ապրիլ 14:

Պատմութիւնը մեզի կը ցուցընէ, թէ Հայոց եկեղեցին թէպէտև երկայն ժամանակներ հաւատքի և կրօնական նիւթերու վրայ կոհիւներ և վէճեր ունեցած է իւր մէջը, սակայն աստուածային պաշտամունքը երբէք բաժնուած չէր կանոնական կերպով մինչև 1709: Ասիկա բնական էր որ ասանկ ըլլար: Գյերապատիւ Աղքանդը Ա. Պալճեան, և Գյերապատիւ Ստեփան Ա. Աղարեան, առջնորդ Աթոռ. Ա. Պետրոսի տիտղոսով, և երկրորդ՝ Անսիսալութեան վրայ հրատարակած զրբերնուն մէջ մեր առջեր կը դնեն Փլորենտեան ժողովքին ժամանակներէն ետքը շարք մը ուղղափառ կաթողիկոսաց և եպիսկոպոսաց մինչև զրեթէ Քրիստոսի 1717երորդ տարին, որոնց հետ Հռոմայ Քահանայապետները թղթակցած են. և քանի որ այսպիսի աստուածարեալ եպիսկոպոսունք կային եպիսկոպոսական և կաթողիկոսական աթոռներուն վրայ, անկարելի էր Հայոց եկեղեցին անուանել հերձուածող և հերետիկոս. հերձուածը կը մնար հերձուածոմիտներուն վրայ, որոնք կը յուսացուեր յուղղութիւն բերել:

Անոր համար նոյն իսկ Աղեմէս Ալանոս կը պաշտպանէ թէ Հայոց եկեղեցին չկրնար ըսուիլ հերձտիկոս կամ հերձուածող. թէպէտև մէկալ կողմանէ չուրանար, թէ կան բաներ, որ պէտք ունին շակուելու: Աս ասանկ ըլլալով ուղղափառամիտները խիղճ չեն ըներ Հայոց եկեղեցիները երթալու, որոնք իրենց ուղղափառ հարքը շնած էին, և զանոնք իրենցը կը համարէին: Երբ որ “Թօռողթ քաջալերական առ Ուղղափառ մերազնեայս” որք ի քաղաքին Երգոկիա” մատեանը² կը զրէ. “Դռն և այլ բազումք ի ժամանակիս մերում, որք զնոյն շաւելու ունին ուղղափառութեան, եպիսկոպոսք, վարդապետք, քահանայք, արեղայք և այլք ի գղերց յիւրաքանչիւց թեմից կաթողիկոսաց, և աշխարհականք գրեթէ անբաւք”. միթէ ասոնք ուրիշ եկեղեցիներ կ'երթային պատարագ զրուցելու, ժամերդութիւն ընելու, խոստովանուելու, հաղորդուելու և այլն: — Ոչ երթէ:

Ասուածածոյին պաշտաման բաժնուելուն պատմառ եղան հալածանքները, որ անցեալ գարուն սկիզբները նախ սկսան Պալճկաստանի Սպահան և Չուղա քաղաքները, այն աեղաց հայ կղերին և համախոչներուն կողմանէ անանկ ժանառութեամբ, որ ուղղափառները սկսան տարակուսիլ, թէ կրնան արգեօք հաղորդակցիլ յաստուածայինս ուղղափառութեան գէմ ասանկ յայտնի մաքառողներուն հետ: Այն կողմերը գտնուող քարոզիչներն ալ երկու կարծեաց բաժնուեցան. ոմանք կըսէին թէ յաստուածայինս հաղորդակցութիւնը կրնայ յառաջուան պէս շարունակուիլ, որովհետև այս եպիսկոպոսունք և քահանայք յանուանէ բանազրեալ չեն. ասոր հակառակ ու

* Զեռաղեր Միսիթարեան Միսիթարեան Ապէէննա, թիւ 157,

ըիշները կը կարծէին թէ ուղղափառները արդէն զատ եւ կեղեցի ունենալով, ալ այն հերձուածողաց հետ յաստուածայինս հաղորդակցութիւնը օրինաւոր չէ։ Ա երջապէս խնդիրը Ս. Ըժուուին խրկուեցաւ ուրիշ տարակուսանիներով մէկ տեղ, և այն ժամանակուան Ա. Քահանայագետը Աղնմէս Ժ. որաշում ըբաւ ժխտական այսպէս։ “Ըմենասուրբ Տէրն մեր վերսոյքեալ լսելով Ա սեմաղատիւ Կարդինալաց խորհուրդը ըսաւ առ վեցերորդն”։ “Չէ պարտ, չէ արժան, թող տրուին վճիռները. 1709. Կոյեմբերի 28ին. Հինգշարթի օրը”։

Սպահանու և ջուղայի համար տրուած այս վճիռը ուղղին Աստանդնուազօլոյ քարոզիներէն ոմանք տարածել բովանդակ Տաճկաստանի վրայ և ասկից ծագեցաւ տարածայնութիւն թէ ժողովրդեան և թէ կղերին մէջ։ Տաճի տէրութիւնը բոլորին տարբեր պարագաներու մէջ կը գտնուեր սյն ժամանակները, երբ ազդն ալ մէկ պատրիարքի իշխանութեան տակ էր։ Այս պարագաները կը բացատրէ Անիթար իւր մեղմէ հրատարակուած գլուրուածքին մէջ։ Խնդիրը դարձեալ Ս. Ըժուին խրկուցաւ, և այն ատեն (1718ին) Անիթար Վարդահայր որ իւր նորահասաւատ Միաբանութեան գործքերուն համար Հոռմ գացած էր, Կարդինալ Պահանարային առաջարկութեամբը զրեց իւր յիշատակագիրը Հայոց եկեղեցիները երթալու վրայ և տուաւ Ս. Ժողովքին։ Ահաւասիկ այս է Անիթարաց առաջն գլուրթեան պատճառը։

*Խնդիրներուն՝ Կարդին մէջ վեցերորդ էր Հայոց եկեղեցին Երթալու խնդիրը, և գրուած էր պայտէ։ «Արդեօք ուղղափառ Հայերը կընա՞ն հաղորդակցէլ յաստուածայինս իրենց հերձուածուալ ազգայնց հետ»։

Ս. Ժողովքը չատանալով այս զրուածքով, հարցույ Բրոբականասայի աշակերտ Առաքելեան Խաչատուր վարչ գավետին կարծիքը, որն որ նոյն ժամանակները Անեստիկ կը նստէր, և երկայն ժամանակ արևելք առաքելութիւն ըրած ըլլարով տեղւոյն սպարագոյիցը քաջ տեղակ էր։ Խաչատուր վարդապետին կարծիքը Անիթար կարծեացը համաձայն ելաւ, և յայն կը յանդէր, թէ պէտք չէ Հայոց եկեղեցիներէն քաշուիլ, որով ուղղափառաց մեծ փաս կը հասնէր, և դարձի դագարում յառաջ կու գար։ Ասոր վրայ ելաւ Ս. Ըժուին 1719ին այն վճիռը, որն որ կը յիշէ Անիթար մեր հրատարակած գլուրթեանը մէջ։

Վասիլի այս վճիռը, որ լսաիներէն բնազրէն թարգմանելով հոս տեղս կը դնենք։

Ա միտու հերձուածողաց և հերձուածողաց հետ յաստուածայինս հաղորդակցութեան վրայ, ըսա մտաց Արքոյ Ժողովըն Տարածման Հաւատաց։

Հինգշարթի. 12որդ օր Յունվարի. 1719։

Արքոյ Հոռմ ուումէական և Շնդհանրական աւատաքննութեան Շնդհանուր Ժողովքին մէջ, որ եղաւ Տեսոն մերոյ Կղմայ աստուածային նախախնամութեամբն Արքազան Պահանայտեան Անտասաներորդի առջեւ, Կուրինեան լեռան առաքելական պալատին մէջ երբ ներկայ էին Ա սեմաղատիւ Տեսոն Կարդինալք Պահանական

*Խաչատուր վարդապետին նամակը կրնայ գտնել ուզողը՝ 1786ին Անեստիկ, Անդոնիօ Յաղգա և որդուոց սպարանը տպուած և գատասանի առ ՏէրՊաւոս Մարտէլո Տէլ Մարէ» գրքին մէջ. Երես 445.

Հասարակապետութեան, քննիչք հերետիկոսական խորտորնակ ուսմանց, ու խրկուած էին Ա. Աթոռէն առանձինն այս բանիս համար.

Յառաջ բերուեցան վարը գրուած երեք տարակուսի տակ եղող առաջարկութիւնները, որոնք այսոց ուղղափառաց կողմէն՝ Միմիթարայ Արքահօր Անետիկ բնակող Միանձանց Մեծաւորին ձեռօք, խրկուեցան Տարածման աւատատոյ, և անկե աւատաքննութեան Ժառզովքին. այսինքն

Ա. թէ արդեօք այ ուղղափառաց թոյլ տուեալ է հերձուածողաց եկեղեցիները երթալ, երբ որ ուրիշ հերպով առանց վտանգի կինաց չկարենան միլտել, որաւ կել և ննջեցեալները թաղել.

Բ. Եթէ մէկը խոստովանուելու ըլլայ թէ գացած է (ենթադրեալ թէ թոյլ տուեալ չէ), կընայ անոր արաձիկում տրուիլ առանց պահանջելու բացայատ երդումն մէջ մ'ալ չերթալու համար:

Գ. Երդեօք թոյլ տուեալ է այն խոհեմական դարձուածքը, իրբե թէ ուղղափառք կարող ըլլան մանել հերձուածողաց եկեղեցիները հետաքրքրութեան հտմար, որն որ չկրնար գործադրուիլ, բայց եթէ անոնց եկեղեցական հանդիսութեանցը արտաքին թատերական խաղերու պէս ներկայ գտնուելով, առանց աղօթելու, առանց ամենասուրբ աղորդութեան երկրագելու ի ներքուատ, այլ միայն արտաքրուատ. աս ալ որպէս զի ըլլայ թէ հերձուածողներէն չարչարուին ու նախատուին:

Տէրն մեր՝ Ամենասուրբ Վահանայապետն վերոյգիեալ, լսելով Ա սեմապատիւ Կարդինալաց խորհուրդը ըսաւ. Ըստ մտաց: Եւ միտքն է, որ իրենց վարդապետներնուն, և երկայն ժամանակ այն առաքելութեանց

մէջ գտնուող ուսեալ և հմաւտ քարոզիչներուն խորհուրդ հարցը կենալով բողոքովին սուտ աղանդի գաւանակի գործքերէ, գայթակղութեան ու հաւատքէ իյնալու առիթներէն:

Յովէկի Պարբուլուս Արքար սրբութեան առաջնական և Բնդի. Առարտունութեան:

*Այս վճռոյս հայերէն հին թարդմանութիւնն ալ դասձ ենք և հոս տեղս կը դնենք առանց թարգմանութեան սխալները սրբագրելու:

«Տէրուեղ այսինքն վճռալ Անթօփիցին. և յաղագս սարակուսութեան ուղղափառացն Հայոց ի վերայ գնալով յեկեղեցին ազգին իւրեանց ի կողմանս անհաւատից: Թարգմանեցեալ ի լատինականէ և իստալականէ լեզուէ ի հայ բարբառ. ի նուաստ ծառացէ Յիսուսի Ստեփանոս Աստուածառէ Երգոկիցույ: Հինգարթի յաւուը Երկուսաներորդում ամսոյն Յունվարի, յամի Տեառն 1719 յառաջ ածեցեալ եղեն ի մէջ ժողովզայ Անթօփիցին այն Երեք տարակուսանքն, որ այսոր առաքեցեալ էին ի սրբազն ժողովզն Փրափականու, առ որ և զոյն առքերեալ և առարերեալ էր ի կողմանէ ուղղափառացն Հայոց Արքահայրն Միմիթար, որ է մեծաւոր կոնսաւրորացն Հայոց բնակողացն ի վենետիկ, այսինքն

Ա. Դամի թէ կարիցէն ուղղափառ Հայքն թարց մեղանչելով դնալ յեկեղեցին հերձուածողաց. որովհետև ոչ զայ իմ հնար առանց գտանդի կենաց մկրտչելով զերախայս, առնելոյ պահած և թաղելով զմեռեալ:

Բ. Երկրորդ, միթէ յորժամ ուղղափառ որ զայ ի խոսնովանիլ, Եղեալ է թէ մղք իցէ ի վերցասացեալ եկեղեցին զնալն, կարէ արդեօք ուղղափառ խոսնովանչայրն առաջ նման զիորհրդական արձակումն առանց ինդրելով ի նմանէ զերդումն ոչ սյլ ևս երեւէ զնալոյ:

Գ. Երրորդ՝ միթէ կարելէ իցէ թարց մեղանչելոյ ի կիր արկանել զբազմական իմ խոհեմութիւն, որպէս զի ուղղափառքն մասնիցին յեկեղեցին հերձուածողաց, իրբու ի ժողովարան Նորէց վան զործց հետաքրքրութեան և կամ վան թամաշա առնելոյ, որ և ոչ կարէ զործիլ, եթէ ոչ յանդիման կալով առաջի սրբազնութեանց նոցին իրբու առաջի անսուրբ և հրապարական խոզարկութեանց թարց սրբի աղօթելոյ և կամ ներքսապէս երկրպառքելոյ սրբոյ խորհրդոյ սեղանայն. այլ միայն առ աչս և արտաքսապէս, զի մի գուցէ զարցացեալ հերձուածող ժողովրդեան սկանիցի սովիր և բանցի հարականել զողղափառն:

Սրբազն Հայրապետն ուրեմն իրբն լուաւ զտարակուսանս զայսուիկ, ասաց այսպէս. ըստ մատի միաս է, թէ հարցանիցին և ընկալցին զնարհուրդն ի վարդապետաց և ի բարեկիրաց, յառաքինեաց և ի գիտաց եկեղեցականաց, ընդ երկայն ժամանակու կացելով ի մէջ միսաթօնարարութեան ի կողմանն յայնուիկ, ի բաց կալով ամենենիմ ի ներգործքութեանց գաւանականաց և ի սուտ աղանդոց» (Աստինատարան Միմիթարեան Վիննա. Զեսապիթ թիւ 206):

Այս վճիռը այսպէս հրատարակուեցաւ, և օրինակ ները պէտք եղած տեղուանք խրկուեցան. բայց ինչպէս կը պատահի կրօնական տարաձայնութեանց մէջ զրեթէ միշտ, կողմնակյութիւնները չդադրեցան: Եցրու ծայրայել կողմնակյութիւնները, մէկը չափազանց ինտ և մէկալ չափազանց նոյն երկուքն ալ Ս. Աթոռոցն վճիռը աղէկ չհասկընալով և կամ չուզելով հասկընալ, իրալու հետ կը կրուէին: Խիստերը յանշափս սեղմելով վճռոյն միտքը կ'ըսէին թէ Մէկիթար Արքահայր խարեր է Ս. Աթոռը իւր սուտ ու մուտ աեղեկութիւններովը, և թէ բնաւ անմենեցն Հայոց եկեղեցինները երթալ չըլլար: Ասմանց հակառակ թոյելր՝ ընդարձակելով յանշափս վերոյ գրեալ վճռոյն միտքը կ'ըսէին թէ Հայոց հերձուածողաց եկեղեցինները կրնայ անիտէր երթըսուիլ, ու անոնց հետ հաղորդակցուիլ յաստուածայինս: Սակայն վճռոյն միտքը առ չէր: Արքաղան Քահանայապեան Ավեմէս Ժ. Ա. ըս աելովը թէ սուտ աղանդի դաւանանք տալու գործքերէ, ու գայթակցութեան և հաւատքէ կործաննելու առիթներին զգուշանան, կ'իմսնար որ ասանկ պարագաներէ զգուշանալու են. որովհետեւ ասոնք Ս. Եկեղեցին իշխանութիւն ըւնի անօրիննելու աստուածային և բնական օրինաց կարգն ըլլանուն: Մէկալ կողմանէ ըսելով որ ասնցմէ զուրս գտնուած առանձին զէպքերու մէջ խոհմ, հմաւա և վարժ վարդապետացը խորհրդովը գործեն, կ'իմսնար ու կ'ենթադրէր թէ կան ոյսպիսի պարագաներ, և ասոնք վարդապետաց խոհմութեան կը ձգէր: Ինքը նոյն Քահանայապեան էր, որ 10 տարի յառաջ Պարսկաստանի ուղղափառաց ժխտական պատասխան տուած էր, կ'ըսնար 1719ին ալ Տաճկաստանի ուղղափառաց ժխտական պատասխան տալ: Ասանկ ընեւ

լովը, ըսել ուզեց թէ Տաճկաստանի պարագաները բուլրովին տարբեր են:

Մէկիթար Արքահայր, որուն Ս. Աթոռին նկատմամբ ունեցած հպատակութեան ովին, ինչպէս իւր զրուածներէն, ասանկ ևս մեր հրատարակած զրութենէն ալ կ'երեւայ, իւր աշկերտներովը վճռոյն ցուցըցած խոհմեական ճամբուն վրայ հաստատուն կը կ'նար: Բայց ծայլայել թոյլ կողման բերանը վահնգաւոր սկիզբ մը կը պարակր, այն սկզբունքներուն դիմաւորը, որմնք Առնա. Աւերի^{*} առաքելական փոխանորդը Առյիսի 8ին տուած վճռովը գատապարտած է: Օհայրայել խիստ կողմնակյութիւնը քունի մէջ չէր, այս բերնէ բերան պտրած սխալ սկզբան առաջնորդողը զՄէկիթար զնելով, ամբաստանեց զինքը Ս. Ճողովքին, իրեւ թէ զրած ըլլայ իւր աշակերտայը՝ թոյլ տալ ժողովրդեան, աղատ և անխափի երթալու հերձուածողաց եկեղեցինները, անոնցմէ ընդունիլ խորհուրդները առանց զանազանութեան, և այն և այն:

Ասոր վրայ Ս. Ճողովքը զրեց Մէկիթարայ 1721ին Փետրուարի 8ին թուականաւ, և հրամայեց, որ եթէ ասանկ հրահանգ մը տուած է, խոյն յետս կոչէ, և յետս կոչեն իւր աշկերտները ևս, եթէ այսպիսի բան մը վարդապետած ու սորվեցուցած են: Աս թղթոյն պատասխան տուաւ Մէկիթար նոյն տարւոյն Փետրուարի 22ին, որուն մէջ կը յայտնէ թէ ոչ ինք և ոչ իւր աշ-

*Առուշնօ իւր Պարսկատպրին մէջ կ'ըսէ թէ Առնա. Աւերի 1720էն մինչև 1730 առաքելական փոխանորդ էր ի Կոստանդնուպոլիս: Սակայն ունինք Ս. Ժողովքին մէկ թուղթը առ Առնա. Բաօլի, Արքեպիսկոպոս Լարիսայ, և պատրիարքական փոխանորդ ի Կոստանդնուպոլիս: 1727 Օգոստ. 30 թուականաւ, Ուրեմն Աւերի մինչև 1727 կ'ըսնայ առաքելական փոխանորդ ըլլալ: — Եթէ Աւերին վճռոյն մէջ տարին զրուած ըլլար, կ'ըսնայնք անկից աւելի ըստ առաջ, բայց դժբաղչութեամբ առ ալ կը պակի՛:

կերաներէն մէկը ասանկ վարդապետութիւն մ'ըրած չեն։
Ալ դնէ Ա. Ժաղովքին առջին զինքը ամբաստանող խիստ
կողմնակցութեան անզգոյշ խօսքերն ալ և կը ցուցընէ գե-
ղեցիկ փաստերով թէ ինք 1719ին վճիռը տրուելու ժա-
մանակ իւր զրած տեղեկութիւններովը Ա. Ռոռը խա-
բած չէ։ Աւասիկ այս է Միխիթարայ երկրորդ զրութեան
պատճառով։

Ուրեմն երկու ծայրայեղ կողմնակցութեանց մէջ կը
դանուեր Միխիթար իւր աշակերաներովը։ Ըզգը մէկ պատ-
րիարքի իշխանութեան տակ գտնուելով այն ժամանակ-
ները, այսինքն կուզենք ըսել բաժնուած ըլլալով երկու
հասարակութեանց, ինչպէս որ այսօրուան օրս է, այն
ժամանակուան Տաճկի օրէնսդրութեան համեմատ Մկրտ-
ութեան, Դրոշմի, Պասկի խորհուրդները անկարելի էր
չընդունիլ Հայոց եկեղեցիներէն, այսպէս իմացիր Մեռե-
լաթաղի և Տեօրհնէքի նկատմամբ, որոնք իրօք մինչև
1830 Հայոց քահանաներու ձեռօք կը լլային**։ Ային
նաև դէպքեր որոնց մէջ խորհրդով խոսառվանահարց
կրնար երթքուիլ Հայոց եկեղեցիները, երբ կամ հարկ
կար, և կամ մանաւանդ ուր հալածանք չկար, և կամ
մանաւանդ ուր որ եպիսկոպոսը և կղերին մէկ մասը ուղ-
ղափառամիտ էին, ինչպէս Աթիկիոյ կաթողիկոսական թե-
մը Արքահամ Աթողիկոսի ժամանակի։ Արդ թէ տէրու-
թեան և թէ ազգին այն ժամանակուան վիճակը մաս-
ծելով միաւել չափազանցութիւն մի էր զրուցելը թէ
Էպացարչակաղեն Հայոց եկեղեցիները երթալ ըլլար։ Մա-

*Թէ Ա. Ժաղովքին և թէ Միխիթարայ զրած նամակները կը ման գտնել ու-
ղողները Աւելատիկ Ա. Պազարու վանքը տպուած Schiaramenti e Documenti
ըստած զբքին մէջ Կարգին մէջ 60 Երոբն և մէր բած նամակը։

**Միխիթարայ 1721ին Փետրարտ 22ին զրած նամակն կը տեմուի, թէ իւր
ժամանակները թուակն ալ Հայոց քահանաներուն ձեռքէն ընդունողներ կային։

նաւանդ Աղեմէս Ժ. 1719ին վճռէն ետքը, որ ե-
րեք յաստուածային և ի բնական իրաւանց արգելեալ
գէպքերը դուրս հանելով, մնացածը աստուածաբանից
խորհրդոյն կը թողուր։ Քիչ համոզող է այն պատճառու-
որ կը բերեն այս չափազանցները թէ զրեթէ միշտ գոյ-
թակղութեան և հաւաքքի ինալու վախ կար։ Այսէ
անանկ ըլլար, Աղեմէս Ժ. Վահանայապեալը 1719ին
անանկ վճիռ չեր հաներ, այլ պատասխան կու տար
ժխտական, ինչպէս որ Պարսկաստանի քարոզչաց 10 տա-
րի յառաջ ըստած էր։ Չէ աղբան։ — Ա.
Ժաղովքը 1723ին Յուլիսի 9ին թուականաւ թուղթ
մը** զրած է արևելքի կղերին որուն մէջ կը զրուցէ թէ
այս նկատմամբ ստոյդ և անտարակուսելի գործքեր և պա-
րագաներու ծանօթութիւն հարկ ըլլալով ունինալ, և

*Ա. թէ թէ ին թարգմանութիւնը հոս կը դնէնք, աւելորդ սեպելով նո-
րէն թարգմանել։ Թարգմանիլը վերսիւեալ Ստեփանոս Աստուածատու-
թաղեցիցին կ'երեսոյ։

«Ինչ ի բազմաց միմիտարաց, որը ի զանազան գաւառու սահատակց և փ
մէջ զանազան աղանդոց հերձուածուաց և հերետիկոսաց զբանահատենային
քարոզեն, աղոք յեկեցեալը եղեն ոմանք տարակուաւութիւնը առ աւելի ժադանի
Բորբականու սակա լուծան և սակա վարժեցման զնացւոց պարագանութեանց
որը ևն այսորիկ։

Մէմէ և կամ թէ յորս պատահմուն և կամ թէ որովք պատրաժենալու
ուղղափառք կարգեցն Հաղորդակցի լնդ հերձուածուաց և հերետիկոսաց, զնալ
յեկեցեցին նոցունց և ներկայ լնիլ ժամանակութեանց և սյլց պաշտամանց
նոցունց եկեղեցականաց։ և մինչ սակա լուծանց նոցունց տարակուաւութեանց
և նաև ից նաև աւատումն և բացարութիւն ին իսկունակ և աներկեց գործոց և
պարագացից նոցունց ի վերայ որոց նաև ու և նորին կակ միսիօնարք համաձայնք
են։ ուստի նոյնին պարտին մարզիլ և կրթիլ սյօնէս։ թէ բնաւին պարտին ի
բաց կալ ի որդոց գաւանականաց սուս աղանդոց և ի հաղորդակցութենէ ընդ-
արարութեանց հերձուածուականաց և հերետիկոսականաց, և ի վասնդէ խան-
գարման և թիւրութեան։

Զայսոսկ ուրեմն ունելով միշտ հաստատու և աղանդ և պահելով միշտ յան-
դիսան աւաց։ իսկ եթէ բաց յայսմանէ առդիւրէցի այս լ ինչ ծանր տարակու-
աւութիւն, Հարցանիցեն զնորհուրդ և յաստուածաբանից և ի միսիօնարաց, որը
երկար և բազմը ժամանակու զտանին ի յայսոսիկ զաւառ և առնեն զմիսօ-
նարութիւն։ (Ա. Պատեն, Միխիթ. Ա. ինն, Զետ. թիւ 206)

շահու ակնկալութենէն։ Այս բանիս վըայ քիչ ազդեցութիւն չունի հերձուածին ընթացքն ալ։ Այն ժամանակներու պատմութենէն գիտենք թէ մեր աղջին հերձուածը մէկ վայրինի կամ կարճ ժամանակի մէջ չկերպաւորեցաւ, այլ երկայն ժամանակի ընթացքին մէջ և յաջորդաբար, և այն ոչ եթէ որոշ և համեալ սահմաններով, այլ անորոշ և տարտամ կերպով։ Ուրիշ էր հերձուածին վիճակը 1700էն յառաջ, ուրիշ անցած գարուն առջի կէսին, ուրիշ նոյն դարուն երկրորդ կէսին և ուրիշ մեր գարուն սկիզբները։ Անոր համար եթէ 1700էն յառաջ ուղղափառները անխիղճ համարձակ հայոց եկեղեցիները կրնային յաճախել, 1700էն եաբը այս աղատութիւնը պէտք էր սեղմուիլ. աւելի ևս անցեալ դարուն կէսին ետքը և աւելի մեր գարուն մէջ։ Նույն իսկամատութեանը անցեալ դարուն առջի կէսին իր խստութեանը՝ իրաւունք չէր կրնար ունենալ, նոյն դարուն երկրորդ կէսին որ ատեն հերձուածը աւելի կերպաւորեցաւ և զայրացաւ, կրնար աւելի իրաւունք ստանալ. առաւելապէս ևս մեր գարուն մէջ։ Բայց թոյլ կողմնակցութեան սկզբունքը երբէք չէր կրնար իրաւունք դանել. վասն զի Եկեղեցին երբէք չէր կրնար հրաման տալ որ աղատ և անխստիր հաղորդակիցութիւն ըլլայ յաստուածային՝ հերձուածողաց հետ։ Ասկից ինքնին կը հետեւի, որ Վիսիթար Աբբահայր և իւր աշկերտները իւրենց միջին ճամբովը անցեալ դարուն առջի կէսին կրնային իրաւունք ունենալ և յաջորդ ժամանակներուն մէջ չունենալ և կամ քիչ իրաւունք ունենալ, հերձուածին զայրանալուն և որոշ կերպարանք առնելուն պատճառաւ։ Ասինք իրենց միջին ճամբովը. վասն զի երբ Վիսիթար Աբբահայր և իւր աշկերտները կղեմայ Վե-

144

ասոնց վըայ նոյն իսկ քարողիները միաբան ըլլալով եւ բեք վերցիշեալ գէպքերը գուրս հանելով, ուրիշ ծանր տարակուական գէպքերու մէջ երկայն ժամանակ ան կողմերը դանուող տասուածաբան վարդապետներու խորհուրդ հարցուելու է։ Ասիկա ուրիշ բան չէր, բայց եթէ Կղեմայ ԺԱ.Ի վճիռը կրկնել։ Կ'երեւայ թէ չափազանց թոյլ կողմնակցութիւնը իւր ընդարձակ և աղատ պահանջմանցը մէջ յամառ կեցած էր, որ Ս. Ժաղովքը 1729ին նորէն հրահանգ մը խրկած է արևելքի եպիսկոպոսաց և քարոզաց, որուն մէջ աւելի ընդարձակ և խստիւ կը հրամայէ ջանալու ևս քաշել ժողովուրդը յաստուածային հաղորդակցութենէ։ Աս կը ցուցընէ նաև Մ'ոնա. Մ'աւրիին վճիռը։

Աւասիկ մինչեւ հիմա խօսուած՝ չափազանց ինուո կողմնակցութեան դէմ է Վիսիթարայ Աբբահօր մեղմէ ի լոյս ընծայուած գրութիւնը որ երրորդն է լստ կարդի ժամանակադրութեան. այսինքն անոնց գէմ որոնք կը սէին թէ հայոցակառէ հայոց եկեղեցին չկընար երթբցուիլ։

Հոս տեղս հարկ կը համարինք ծանուցանել, որ մինչեւ հիմա գրածներնուս մէջ նոյլ կամ ինուո կողմնակցութիւնը լսելով մէկը նախառել կամ պարսաւել չենք ուղեր։ Ինչ որ գրեցինք, Վիսիթար Աբբահօր մեղմէ հրատարակուած գրութեանը պատճառ ըլլող գէպքերուն ողատմութիւնը լրսաւորելու համար գրեցինք։ Ապա թէ ոչ դիտենք որ կրօնական տարաձայնութեանց ատեն մարդկային տկարութիւնը որոշ սահմանի մէջ չկընար կինալ, ոմն չափաղանց եռանդէ շարժելով, ոմն աղատութեան չափաղանց սէրէն, այլ ոմն կանխակալ սովորութիւնը թող տալու դժուարութենէն, և միւս ոմն նիւթական

տասաներորդի վճռոյն վրայ հաստատեալ կը զրուցեին
թէ քանի մը ստիպողական դէպքերու մէջ Հայոց ե-
կեղեցին կրնայ երթըսուիլ զիանոց խորհրդով. երբէք
չին հասկրնար թէ կրնայ երթըսուիլ անխափիր, հեր-
ձուածող քահանայի խոստովանուիլ անխափիր, գիտնա-
լով թէ հերձուածող է, անկէ հաղորդուիլ անխափիր և
այլն: Մեր հրատարակած դրութեան ուժերորդ յօդուա-
ծին մէջ կը զրուցէ յայսանի երանաշորհ վարդապետը,
թէ շատ քաղաքներու մէջ ուղղափառ քահանայք կան,
որոնք իրենց եկեղեցիներէն չեն կրնար ետ քաշուիլ: Ու-
րեմն անտարակուսելի բան է, որ ուղղափառները գիտեին
աս ուղղափառ քահանաները, անոնց կը խոստովանուեին,
անոնցմէ հաղորդ կ'առնեին, և այնպիսիներուն պատարա-
գին ներկայ դտնուելու խիզճ չին ըներ: Այսպիսիներէն
չէր մի Մինաս Ելքեպիսկոպոսն ալ Օմիւռնիայ, որուն
Ա. Գաահը իւր առաքելական փոխմնորդին ձեռօք խրատ
կու տար չլլել, չգալ ի Հռոմ, այլ մնալ իւր թեմին
մէջ, որպէս զի ուղղափառոց վնաս չտանի, ինչպէս կը
տեսնուի Ա. Ժողովքին 1733ին Մարտի 28ին դրած
մէլ նամակին:

Ուրեմն մեզմէ հրատարակուած Միիթարայ Երրա-
հօր գրութիւնը կարդալու տաեն մարդ աչքին առջեն
ունենալու է միշտ անոր ժամանակները, հերձուածին
մեղմ վիճակը, Աղեմայ Մետասաներորդի 1719ին վճի-
ռը, Տաճիր տէրութեան օրէնադրութիւնը, ազգին երկու
հասարակութեանց բաժնուած չըլլալը, և ուրիշ ասոնց
նման պարագաները, և շխառնելու է զանիկա յախուռն
և անընտրութեամբ թոյլ կողմնակցութեան հետ:

Մինչեւ հիմս ըսածներնէս և ասիէ ետքը ըսելլիներ-
նէս կը հետեւի

Կամիս: Այն տասոր հերետիկոսական կանոնները որոնք
Վուշինո իւր Պարսաւագրքին մէջ Միիթարայ կ'ըն-
ծայէ, Միիթարայ չեն ու չեն կրնար ըլլալ:
Այս կանոններէն երեք օրինակ ունինք մեր ձեռքը:
Առաջինը է Մոնս. Մաւրիին դատապարտութեան վճի-
ռը (առանց տարւոյ). երկորրդը է Ա. Ժողովքին 1781ին
Անենեափիի Միիթարեանց խրկուած օրինակ՝ անոնց
հերքման նամակին մէջ. ու երրորդը՝ այն կանոններուն
հայերէնը, որն որ յաջողեցաւ մէզի դանելու մէկ ձեռա-
պրի մը մէջ (Մատենադարան Միիթարեանց Անենա-
ցոց. Չեռապիր. Ծմիւ 206):

*Աւասիկ հայերէն օրինակը.

1. Սրբազն Պապն և Ա. Ժողովը տէ Բրուրականսա ֆիտե կայուցեալ (Է) զՄիիթար Երբահայրն վերակացու և հովի ամենայն ազդին Հայոց, զի կա-
ռավարեցէ զնոսա ըստ խոհեմութեան իւրամ և ու այլ որ իւնիցէ ի վերաց
նոցա:

2. Ուղղափառն պարտաւորը Են Միիթար Արքային և հետեապէս աշա-
կերաց նորին, Եթէ հնազանդիցին սրբյ Եկեղեցւոյ:

3. Ասէ ուրեմն Արքահայրն Միիթար. ազգն Հայոց ու է հերձուածող
յայաց ժամանակի:

4. Կարեն ուղղափառը արտաքրյ որոգայթի մահուան, այսինքն յորժամ ու
զոյ որոգայթ մահուան և ի պակասութեան փորձեցեալ քահանային խոսոո-
գանիլ զմեզս իւրեանց քահանային որ ու է կոչեցեալ յեպիսկոպոսէ, և կամ
հերձուածող քահանայի և առնուլ զհաջորդութիւն ի նոցանէ:

5. Հրաման սրբյ Եկեղեցւոյ տեսանել և լսել զզառարագս յաւուրա կիւ-
րակէից և ի հետայրեալ պարտաւորէ զուղղափառ գնալ յեկեղեցիս հերձուա-
ծողաց և լսել զզառարագս մասուցեալ ի հերձուածող քահանային:

6. Հրաման սրբյ Եկեղեցւոյ խոսոովանիլ զմեզս գոնէ ի տարին մի անդամ
և առնոյ զզառական հաջորդութիւն ի պակասութեան փորձեցեալ քահանայի,
պարտաւորէ զուղղափառն խոսոովանիլ զմեզս իւրեանց քահանայի, որ ու է
փորձեցեալ ի յեպիսկոպոսէ և կամ հերձուածող քահանայի, և առնուլ ըզ-
զառական հաջորդութիւն ի նոցոնէ:

7. Ուղղափառը տեսանելով և լսելով զզառարագս հերձուածողաց կամ ներ-
կայ լինելով ժամանակակից ժամանակակից լուսաւութեանց նոցա ընդունին և առնուն զվարձս և զարդինս
առ փրկութիւն հովուց իւրեանց:

8. Ուղղափառը ու մեղմութեն հաղորդակցելով ընդ հերձուածողս ի յերս աս-
տաւածայինս. մանաւանդ պարտականք ևն յորդայթի ընչից և կենաց:

9. Սրբազն Պապն և Ա. Ժողովն տէ Բրուրականսա ֆիտե քան այնորին

Այս երեք օրինակները իրարու հետ բաղդատելով,
հայերէն օրինակին առջև երկու յօդուածները Առնս.
Մաւրիին վճռոյն մէջ չենք գտներ, այլ 1781ին Ահ-
նետիկ խրկուած օրինակին մէջ։ Ռնել է թէ այս երկու
յօդուածները վերջէն աւելցուած են. ինչու որ եթէ ե-
ղած ըլլային, չեր կրնար Առնս, Մաւրի զանոնք ալ մէ-
կալնոնց հետ մէկ աւել չդատապարտել։ Վասնկ ևս հայե-
րէնին Գրորդ յօդուածը Անետիկի օրինակին մէջ կայ
ու Առնս, Մաւրիին օրինակին մէջ չկայ։ Վա ալ ու-
րեմն վերջէն աւելցուած է։ — Գրալով հայերէն օրի-
նակին շարադրութեանը և ոճյն և քննելով բանասի-
րական կերպով, այս գրութեան վրայ Միփթար Ար-
քահօր ոճն ու դրիչը չենք տեսներ, այլ աւելի ետքի
ժամանակինը այսինքն աւելի մաքուր և աղատ ի լատի-
նականութենէ։ Երկրորդ յօդուածը քիչ մը լատինական
կը հնչէ, սակայն աս ալ գրչի սխալ կերեայ, և պէտք
է սրբագրուի այսպէս ըստ վենետիկական օրինակի. «Ուղ-
ղափառքն պարաւառք են հնազանդիլ Միփթար Ար-
քային և հետեւապէս աշակերտաց նորին, որպէս պար-
տաւորք են եթէ հնազանդիցին սրբոյ Ակեղեցւոյ»։

զիայիմանսոս եպիսկոպոսն եհան ի վեարութենէ Պատրիարքութեան, զի
խօսեալ և ընդէմ Միփթար Արքային և աշակերտաց նորին։

10. Արքազան Պապն և Յ. Փողով տէ Բրուրականսոս Փիոտ եւս հրաման
Միփթար արքային և այլը ուղափառաց զնալ յեկեղեցին հերձուածողաց և
ներկայ լնիւ ժամերգութեան նոցին»։ (Մատեն. Միփթ. Վիենն. Զեռագիր
թ. 206) (Յօդուածներուն բառեւ 1ին դիւնչ 10 հետ ուղացացար էնչ։)

*Վիեննայի Միփթարեանց հին ժամանակադրութիւնը (Զեռագ. թ. 195)
կը գրէ պապէս. «1720. 21. Հանաւ աթոռացն Կալան անուանեալ վիկարն, որ
ի կոստանդնուպօլիս, և փոխանակ նորա այլ ոմն եղաւ»։ Պարձեալ կը գրէ.
«1743. 44. Ի Մայիսի Հերումն Բննա վիկարն այսինքն փոխանորդն Կոստան-
դնուպօլույ պատրիարքին, եկն բնակեցաւ ի վանս մեր յորդորմամբ պատրիար-
քին Վիեննայ»։ Արդեօք այս Հերումն է Թրորդ յօդուածոյն Ռայխան-
տոսը։

Անտարակուսելի բան մի է, որ եթէ այս տասը կա-
նոնք ըսուած գրութիւնը Միփթարայ Արքահօր եղած
ըլլար, Միփթար անիկա հայերէն գրած պիտ' որ ըլլար։
Եթէ մեզմէ հրատարակուած գրութիւնը Միփթարայ
է, որուն վրայ բնաւ չենք տարակուսիր, այն ատեն այն
տասը կանոններունը Միփթարայ չկրնար ըլլալ։ Ոչ մի-
այն ոճն և շարագրութիւնը, ինչպէս ըսինք՝ այլ և բա-
ռելն իսկ կը ցուցընեն ասոր ասանկ ըլլալ։ Միփթար
իւր գրուածքին մէջ կըսէ հազար տեղ, ճառաւիցունիւն-
է հոգեւոր կամ ճառաւիցունիւն հոգեւոր և կամ պար-
զապէս ճառաւիցունիւն։ իսկ տասը կանոնաց հայերէնը
կըսէ հաղորդակցէլ և յէլ ասորուածային։ Միփթար կը
գործածէ մէկ տեղ մը որդուայն բառը գայթակղութեան
տեղ, իսկ տասը կանոնաց հայերէնը կը դնէ նոյն բառը
փոխանակ վտանդի (մահուան և այլն)։ Բաց ասկից քա-
հանայ կոչեցեալ, և կամ կոչեցեալ յէղիսկաղունէ, նոյն-
պէս Ա. Ժանդան որէ Բայուսականուան Ֆիորե բացատրութիւն-
ները Միփթարայ գրուածքին մէջ ամենեին չեն տես-
նուիր։ — Աեղի կերեայ որ այս տասը կանոնաց հայե-
րէնը իտալերէնէն թարգմանուած է։ Ա ասն զի նախ՝ ի-
տալերէնը աւելի բացայատ է քան թէ հայերէնը։ Եւ-
երկրորդ՝ այն բառերուն տարտամութիւնը, մէյ մը ար-
տաւոյ որդուայնի ճահուան ըսելին ետքը՝ անմիջապէս վրայ
բերել և ըսելը՝ այսինդն յորժամ ու գործամ ուրդուայն ճահուան։
մէյ մը կոչեցեալ քահանայ ըսել, մէյ մը կոչեցեալ յե-
պիսկոպոսէ (approvato), կը ցուցընէ այս գրուածքին թարգ-
մանութիւն, և թարգմանութեան անվարժ գրչէ մը ե-
լած ըլլալ։ Խակ հինգերորդ յօդուածին մէջ զրցուածը
«Վաել զպատարագս յաւուրս կիւրակէից և ի հրամայեալ»
կը ցուցընէ յայնատէս թէ ինչպէս թարգմանիչը իտա-

լերէնին կապուտծ է, և ըրած է բառական թարդմանութեան մը որ հայերէն լեզուի համաձայնութեան համատ չըլսալով, իմաստը աղէկ չքացատրեր, և աւելի խալերէն է ըսելու ենք քան թէ հայերէն։ Խտալերէնն է Նei giorni di domenica e festivi.

Դանք հիմա նիւթին, որ դիմաւոր բանն է. ասոր մէջն ալ հայերէնը ու Ա ենեափիկի օրինակները ասով իրարու հետ կը միաբանին ու Ա'աւրիին օրինակէն կը զատուին, որ Ա'աւրիին օրինակին մէջ իրը հարցումն դիուածները՝ իրենք իրը նախադասութիւն յառաջ կը բերէն։ Ծակէտև ասիկա պղափի բան մի է, սակայն կը ցուցինէ թէ յառաջ ի ձև տարտկուսի դրի առնուած բանելը, ետքը նախադասութեան աստիճան բարձրացած էն։ Նիւթը երեքին մէջն ալ մի և նոյն է, և է հայերէնին 10 րորդ յօդուածն ընդարձակութիւնն և աւելի մանրամասն բացատրութիւնը։ Ա յինքն կ'ուզենք ըսել այն ծուռ սկզբան, որուն վրայ վերը խօսեցանք և որուն համար Ա'սիթար Աբբայ ամբաստանուեցաւ առ Ա. Ճողովն, և որն որ հելքեց 1721ի Փետրուար 22ին նամակաւը։ Աբբահայրը իւր այս նամակին մէջ ասանկ կը զրէ առ Ա. Ճողովն այս նիւթիս (ծուռ սկզբան) վրայ։

“Ի՞սպահ ի՞նչպէս և ուստի ծագեցաւ այս յիմարական կարծիքը որն որ մեր վրայ նետեցին։ Ալսեմ մակարեւրութեամբ՝ Անկէ, որ մերոնց հոն (այսինքն Առատանդնուպօլիս կամ Ասիա) երթալէն յառաջ քանի մը ուսմիկ մարդիկ ։ Առունէն իրենց հայրենիքը դարձող մէկ քանի հաստ պանդուխտներէն լսելով որ Աանդ Օֆֆիլէն նոյն խնդրոյն վրայ վճիռ մը ելած է, կարծեցին թէ այնպիսի հրաման մը (անիտիք հաղորդակցութեան) առնուած ըլլայ և ասիկա ալ թէ իրենց հաստութեան և պարզ-

մարութեան, և թէ անյադ բաղձանքնուն պատճառաւ, որ ունէին աղատելու անդամ մը խիղճելնուն խայթէն, ինչու որ հերձուածողաց և կեղեցիները չեն կրնար երբեմն չերթալ։ Ի՞սպահ որ զիսեմ, մերոնք հոն համականուն պէս ի չեք պիտի դառնան այդ սուտ և խարեական կարծիքները։ Ո՞ւր թողոնք որ քանի մը պարզամտ և ուամիկ մարդիկ լսելով մերոնցմէ արդէն ելած վճռոյն ճշմարիտ և ուղղղ միաբը ըսին։ Ա'նք կը յուսայինք որ բացարձակ հրաման սիտի գայ. հիմա ի՞նչպէս եղաւ որ չեկաւ։ որոնց պատասխան տուած են մերոնք ցուցընելով այդ յոյսին պարապութիւնը։ Ա'սկէ կ'երեայ յայտնապէս, թէ ինչպէս ասանկ լուրեր ապահովներ պակաս չեղան. զարմանք չէ, որ գտնուած ըլլան նաև այնպիսիներ ալ, որոնք իրօք անանկ հրաման մը ելած ըլլալուն հաւտացած ըլլան”։

Ասոնցմէ կը հետեւի յայտնապէս ։) Ծակ տասոր կանոններ ըստած նախադասութեանց հիմը և սկիզբը, այսինքն ասաներորդ նախադասութիւնը կար Ա'սիթար Աբբահօր ժամանակ 1720էն սկսեալ, որն որ Աբբահայրը ջրեց իւր նամակաւը 1721ին Փետր. 22ին. բ) Ծակ այս նախադասութիւնը յընթացս ժամանակի և ի բերան ուամիկ այլ ևս մէկ քանի նախադասութեանց բաժնուեցաւ, որոնք առջինին հետեւութիւններն էին։ Ասոնք ալ են Ա'աւրիին դատապարտածները (որ առաջին անդամ ի գիր առնուած են իավերէն լեզուաւ)։ գ) Խակ ասոնցմէ գուրս գտնուող երեք նախադասութիւնները այսինքն առաջնորդ, երկրորդը ու իններորդը շատ ևսքը հնարուած ու աւելցուած են։ Եւ եթէ 9երորդ նախադասութեան մէջ գանուող Ուայմոնասոս անունը նոյն է Ծա. 195 ձեռապիկ ժամանակալրութեան մէջ զրուած ։ երոնիմոս

անուան հետ, այն ատեն այս նախադատութեանց փառաւոր ստեղծագործութեան ժամանակը կըլլայ 1720էն մինչև 1744 և աւելի ևս եաքը։ Ստեղծիչները ով որ կուղեն ըլլան, մեզի համար անտարբեր բան մի է. բաւական է մեղի, որ ապացուցինք, թէ հնարաւած են յլնաթաց ժամանակի և գրուած են նախ իտալերէն լեզուաւ։

Հայերէն օրինակը գտանք Անթէպցի Հայր Գէորգին
առ Անկիւրացիս գրած թղթոյն ձեռադրին մէջ, Կլեմայ
Ժ. Քահանայասետին 1719ին հանած վճռոյն և Ա.
Ժողովքին 1723ին Յուլիս 9ին գրած հրահանգին
թարգմանութեանցը մէջ տեղը խոթուած, անանկ մէկ
մարմին ձեւացուցած, որ չգիտցողը մէկ վճռու կը կարծէ:
Որպիսի խարգախութիւն: Արդեօք ասոր համար չէ որ
յիշեալ Անթէպցի Հ. Գէորգ Հռոմեուած, և Ա.
Ժողովքին առւած յետս կոչման թղթոյն մէջ կ'ըսէ թէ
անանկ գրուածներ ու վճռուներ առ ծևս զրին, որ խա-
բուեցայ: Աս յետս կոչման թուղթը կրնայ ուղղողը կար-
դաւ Ապաթէ Մարքէլը Տէլ Մարէին Ակադեմիան+ առ-
պուածնականական+ խուած գլոբին մէջ, որ տպուած է
Սիէնա 1786ին Անդինո Բացցինի, Գարլի և Որդոց
տպարանը:

Չենք կրնար բաւական զարմանալ Ապաթէ Առողի-
նոյին թեթևամտութեամը վրայ, որ Ախիթարայ պէս
երանաշնորհ վարդապետի մը վրայ անանկ գնջոց գնջոց
բաներ զրած է առանց քննադատութեան, և առանց
բաւական վկայութիւններ ձեռքն ունենալու :

Եշրկորդ : Պատմական և ժամանակագրական սխալ մի է, որ կընէ նորերս (1878ին) Ա կէննաւ Ո՞ւսիթարեանց քով տպուած “Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի հայու” զբքին հեղինակը ։ Ազէքանդը Ա :

Պալճեան Ակրիդայ Գրեր. Աքքեսիսկոպոսը, Կղեմայ Ժ.Ը
Քահանայապետին 1719ին Տաճկաստանի համար տուած
վճիռը 1786ին, այսինքն՝ Մելլոն Անդրոսևանին ու Հ.
Միքայէլ Ա. Չամչեանին ժամանակները գները. Բո-
վանդակ դրուածքէն կը տեսնուի, որ հեղինակը ոչ այս
վճույն և ոչ ալ նոյն Կղեմայ Ժ.Ը Քահանայապե-
տին 1709ին Պարսկաստանի համար տուածին բնագիր
օրինակները ձեռքը ցունի. առա թէ ոչ կը տեսնէր ան-
շուշտ այն վճիռներուն թուականները. Ասով է որ յի-
շեալ հեղինակը իրարու խառնած է 1719ին ու 1786ին
գետքերը որոնք իրարմէ 67 տարի հեռու են: Զէ թէ
Մելլոն Անդրոսևան կամ Հ. Միքայէլ Ա. Չամչեան
պատճառ եղուն այն (1719ին) վճույն, ոյլ Միսիթա-
րեան Միարանութեան հիմնադիրը Միսիթար, ինչպէս
յայսնի է վերը գրածներնես:

Եղբարդգութեալ սխալ մի է զըռցելը թէ Աղեմէս
ԺԷ. Քահանայապեաը 1719ին վճռով, իրեն առջեր
դրուած երեք խնդիրներէն միայն երրորդին պատասխան
տուած է: Վեցիդայ Գերբ Արքապիսկոպոսը (Արես 172)
այս երեք խնդիրները կարգաւ զնելին եաքը, ասանկ կը
զրէ: (Այս վերջն ինդիրոյն Ս. Վ. Թոռը աս պատասխանը
տուաւ: “Առ երբորդ խնդիրն: Վանասուրբ Տէր մեր
Քահանայապեա վերագցնդ միշտակեալ” (Աղեմէս ԺԷ)
լուեալ զիսորհուրդ Տէարց Կարդինալաց, ասաց, ըստ
հրաց: Միաքն են, զի հարցցեն զիսորհուրդ վարդապե-
տաց, արանց խորհրդականաց և իմաստնոց եկեղեցակա-
նաց յառաքելութիւնս հմտացելց ընդ բազում ժամա-
նակս, խորշելով ի գլխովին յամենայն գործոց, որք ա-
զանդոյ ստոյ յայտարարք են, և յառթից գայթակրու-
թեան և խոտորութեան”): — Մեր լատիներէն օրինակին

մէջ “Առ Երբորդ ինտիւ” խօսքը չկայ, և ոչ ալ չին հայերէն թարգմանութեան մէջ։ Չենք դիտեր ուստի հանուծ և հեղինակը այս խօսքերը, որոնք նոյն իսկ Ա. Աթոռին դիտաւորութեանը հակառակ կ'երևան։ Ա ասն զի եթէ Ա. Աթոռը այն երեք գրուած խնդիրներէն առաջի երկուքին պատասխան տալ չէր ուղեր, զանոնք ժողովքին առջեւ չէր հաներ։ Իրը բոլորովին Գեր. Արքեպիսկոպոսին զրուցածին հակառակն է։ Աղեմայ Ժ.Ը.ի վճիռը՝ այն երեք խնդիրներուն միահամուռ պատասխանն է։ Եւ ասանկ հասկրցած են միաբան թէ Միսիթար Արքահայր, ինչպէս կ'երեայ մեր հրատարակած գրուածքէն, և թէ իստ ու թոյլ կողմնակցութիւնները։ Ասոր ապացոյց չք մի Ակրտութեան, Պրոշմի, Պատկի, նաև Անուելաթաղի և Տնօրհնէքի Հայոց քահանաներու ձեռք շարունակուիլը, որ առաջն խնդիրն է կարգին մէջ։

Չորրորդ։ “Եսոնպէս բոլորովին ծուռ և քմաղարդ է յիշեալ հեղինակին այս (1719ին) վճռոյն իմաստին տուած սեղմիչ մեկնութիւնը (Երես 172)։ “Ա. Քահանայապետը, կ'ըսէ, այնպիսի նենդաւոր հարցմանց այսպիսի խորագիտ պատասխան մը տուաւ յայտնելով իւր միտքը, թէ ըստ կանոնական կարգաց և հրամանաց, պէտք է հրաժարիլ որպիսի և իցէ հաղորդակցութենէ այլակրօնից հետ երբ վտանգ կայ դաւանութեան ոուտ վարդապետութեան մը կամ առիթ գայթակղութեան և խոտորութեան կամ ապականութեան։ Ակներե յայտնի է թէ այսպիսի վտանգները աւելի ևս Օսմանեան պետութեան մէջ կային, քան թէ Պարսկաստան, ինչպէս պատմեթիւնը կը ցուցընէ”։ — Միշտ ենթաղբելով Ակրիգայ Գեր. Արքեպիսկոպոսը թէ այն վճիռը 1786ին

տրուեր է, Աեղքոսեանն ու Ջամեանը պարսաւ մը կ'ընդունին նենդաւոր բառով իրու զիսաւոր պաշտպանք սուտ կարծեաց, և Աղեմէս Ժ.Ը գովեստ մը կ'ընդունի խորաժիշտ բառով, եթէ արժան իցէ անուանել գովեստ։ Մենք դիտենք որ Աղեմէս Ժ.Ը.ին վճիռը Միսիթար Արքահայր ժամանակը կ'իյնայ (1719ին), ուստի և նենդաւոր բառն ալ անուղղակի Միսիթարայ վրայ կ'իյնայ իրը առաջին և գլխաւոր պաշտպանի այն կարծեաց։ Բայց ոչ երանաշնորհ Միսիթար Արքահայր կը նենդաւոր իր երեք հարցմանցը և Ա. Ժողովքին տուած տեղեկութեանցը մէջ, և ոչ ալ Աղեմէս Ժ.Ը խորագիտ կամ խորամանկ իր պատասխանուոյն մէջ։ Այլ ինչպէս Միսիթար աղատ էր ի նենդաւորութենէ իւր առաջարկութիւնները կամ հարցումները ընելու ատեն, ասանկ ալ Աղեմէս Ժ.Ը Քահանայապետը աղատ էր ի խորագիտութենէ կամ խորամանկութենէ իւր պատասխանը տալու ատեն։ Միսիթար Արքահայր պարզ մտք, միամիտ սրտիւ առջեւը կը գնէր Քահանայապետին իւր ազգին վեճակը, ու Քահանայապետը նոյնպէս պարզ և ուղիղ սրտիւ Երկեղեցւոյն բարիքն աչքին առջեն ունենալով իւր պատասխանը կու տար ըստ ճառաց։ Քահանայապետին միտքն առ էր, որ սուտ աղանդոյ դաւանութեան, գայթակղութեան և հաւատքէ խոտորելու գէպքերը ի բաց առեալ, ուրիշ առանձին դէպքերու մէջ զիտուն աստուածաբանից խորհուրդ հարցընեն և անանկ վարուին։ Ապա թէ ոչ եթէ ասանկ ըլլար, ինչո՞ւ ըստ ճառաց պատասխան պիտի տար, և ոչ թէ ժխտական։ Եթէ ասանկ ըլլար, կրնար լատին առաքելական փոխանորդը թոյլ տալ որ Ակրտութեան, Պրոշմի, Պատկի խորուղիները, և նաև Անուելաթաղը ու Տնօրհնէքը Հայոց

քահանայից ձեռքը ըլսան։ Ա՞լ իշխանութիւն տուած էր կամ կրնար տալ լատին առաքելական փոխանորդին այսպիսի ըըլալու տրամադրութիւն մշնելու, եթէ Աղեմէս ԺԱ, իւր ծայրագոյն առաքելական իշխանութեամբը այն վճիռը տուած ըըլար։ Այս բաները ասանկ շարունակուեցան մի միայն Աղեմէս ԺԱ-ին վճոցն զօրութեամբ, երբ դիտուն աստուածաբանից կարծիքը միաբան էր որ շարունակուին։ Խսկ ու րիշ բաներու մէջ, որոնք ասոնց համեմատութեամբ երկրորդական կամ առանձնական կրնան անուանուիլ, ուղղափառք այնչափ հարկ ըունենալով հաղորդակցութեան, ու կրնարով ետ քաշուիլ, դիտոյ խորհրդորովը կամաց կամաց ետ քաշուեցան։ Եւ եթէ եղան ժամանակ ժամանակ թոյլք կամ հաշտասերք, ասոնք ալ հաշտասէր չըլսդներուն հետ միաբան հալածանք ու դըրկում քաշելովին, և իրենց կարծիքը Ա. Գահին կամացը զրչելովին, ցուցուցին իրենց բարի ուղղափառ ըլլալը։

Արդարակացընենք մեր խօսքը ըսելով, թէ Ակրիդայ զեր. Արքեպիսկոպոսին գրուածքը 170 երեսին կէսէն մինչև 173 երեսին կէսը անհիմն և բոլովին սխալ գրութիւն մի է իւր ամէն խորհրդածութիւններովը։

Հիմա դանք դառնանք մեր նպատակին, այսինքն Ախիթարայ Արքահօր մեզմէ հրատարակուած գրութեանը։ Այս գրուածքը կարդացող աստուածաբանը պէտք չէ դատանել զայն իր ապրած ժամանակէն, այլ մաքովը երթաւու հասնելու է այն դարուն կամ ժամանակին, որուն մէջ կ'ապրէին Ախիթար և Աղեմէս ԺԱ։ Այն ժամանակուան վեճակէն ու տեղական պարագաներէն պէտք է չափէ ամէն բան։ այն պարագաներէն, որոնք վերը բաւական բացատրած ենք, և հոս նորէն կրկնել չենք

ուղեր։ Սակայն և այնպէս եթէ զրուածքին մէջ գտնէ բառեր, կամ խօսքեր, որ կինային գուցէ աւելի ճիշդ կամ սեղմիչ բառերով կամ խօսքերով բացարուիլ, այնպիսին գիտնալու է, որ Ախիթարոյ այս խօսքերը ուրիշ տեղ զրուցածներէն իրենց մեկնութիւնը կընդունին։ Անենք ջանացինք յընթացս գործոյն այս մեկնութիւնները տալ ծանօթութիւններու ձեռքը. բայց սակայն եթէ մէկը գանուի, որ մեր տուած մեկնութեանը չչաւանի, անիկա անհաւանական կարծելով, այնպիսւոյն կը զրուցենք, և անով մեր յառաջաբանը կը գոցենք, թէ Ախիթար Աբբահայր եկեղեցի չէ, քահանայափետ չէ. այլ սոսկ վարդապետ մի է, որ կրնայ սխալիլ։ Որպէս զի իրեն վրայ յարգութեամբ և մեծարանօք խօսինք, բաւական պէտք են ըլլալ մեղի, իրեն՝ թէ Ազգին և թէ Եկեղեցւոյ ըրած մեծամեծ օգուտները. և ամենէն աւելի պէտք է բաւական ըլլայ իւր զրութեանը մետասաներորդ յօդուածին և նոյն յօդուածին երրորդ առարկութեանը մէջ զրուցած մէկ խօսքը, այսինքն Աստված Եկեղեցին Նորայ, որոյ Հայոց պատրիարք հնապահութէլ։ Եթէ սխալած ալ ըլլայ, այս իւր մէկ խօսքը կը գոցէ իւր ամէն սխալը, և պէտք է գոցէ մեր բերանը։

ԱՐԵՎԱՅԻ ԱԽՏՈՒԾՈՅ ՎԱՐԴԱՊԵՏ

ԱՐԱՐԵՎՈՒ

ՊԱՏՃԱՌԻՔ ՈՐՔ ԱՌԲԵՐԻՆ ԸՆԴՀԱԿՄ ՆԱՑԻՆ, ՈՐՔ
ԱՍԵՆ ԹԷ ՈՉ ԵՐԲԷՔ² ՊԱՐՏ Է ԳՆԱԼ ՈՒՂՂԱՓԱ-

ԱՐՑԻ Ի ԺԱՄՆ ՀԱՅՈՑ

Ա. ՆԵԽ զի են ընդ աէրութեամբ Թուրքաց , և անկարելի է ունել զյատուկ եկեղեցի վան ուղղափառաց , ուր կատարիցին խորհուրդք :

Բ. Զի եկեղեցիք և ժամակարգութիւնքն ոչ ի հերձուածողաց,

1 Մի թմարայ այս գրուածքը կը գտնուի Ալեքսանդր Մի թմարեանց գրքատունը պահուած թիւի 46 ձեռագիր մ.ջ. անկից ալ օրինակուած է:

Մեղի կ'երևայ որ Ստեփանոս Մելքոնեան Ըբքային 1751ին Աւելու 11ին
առ Գէւորգ Գարապիլիսէր ի Տիգրանակերտ զրած թշթին մէջ (տես Վահանինու Ծըսե 55) Մսիիթարյա կանոնը կամ դրուածքը բածքը, մեզմէ Հրատարակուած
այս զրութիւնն է և ոչ թէ 10 կանոնները, ինչպէս կը կարձէ Վահանինու: Ան-
կից կը հաստատուինք այս կարծեաց վրայ, որ կ'ըսէ 1) կանոն կամ դրուած,
և ոչ թէ կանոններ, և 2) չըսէք տաւ ողբարութիւն յայսնի հնբուածող քա-
հանայի, այլ անձանց որնց վրաց տարգակցոյս կայ:

2 Այս երկու բառերով՝ կ'որոշուի Միխիթարյան Արքահօր զբանագիրն որպես
գէմ ըլլալը. կ'ուղենիք ըստէ այն չափազանց իւստ կողմանակցութեան դէմ, որ
ու երբեւ, այսինքն բացաձակապէս և ոչ մէկ դէպքի մէջ, նոյն իսկ Մկրտչ-
թեան, Դրասմի, Պատկի Խորհուրդները ընդունելու համար թոյլ չէր ասր
Հայոց եկեղեցներն երթաւ: Աս կը ցուցընէ առաջին յօդուածը, որ Խորհըր-
դոց վրայ է: Կղեմու ԺԱ.Ին 1719ին վճռոյն առաջին խնդիրն աւ աս Խոր-
հըրդոց վրայ է: Ասոնցմէ կը տեսնուի թէ նոյն ժամանակուան խնդիրներուն
մէջ գլխաւորը Խորհուրդներու խնդիրն էր, որուն վրաց կը վիճէ զվահարաբեր
Միխիթար Արքան: Ուստի խելքի մորքի գէմ Կերեայ ըստէ թէ Կղեմու ԺԱ
առ երրորդ խնդիրն պատասխան առւած է անպատասխանի թողլով առաջին եր-
կուրբը:

այլ յողափառաց հարցն Հայոց շինեցան և կարգադրեցան, և թէ յեսայ զմանս որում վասն անդիտութեան իւրեանց վերընկաւան: Աբով ոչ եղն այնպէս, զի ամենեն անմասնակցելի լիցին: որովհետեւ նոյն եկեղեցին Հայոց հակալնի բազմիցս ինքն իւրոյ ինքեան, նաև ի բանս: Քանզի զմուրութիւնս ինչ, զոր յօմանս աեղիս ստորասէ ի հազարաւոր տեղիս բացասէ, որպէս զրէ Կլեմէս 1. 2. ի պրակն 8. ի թիւն 2. և ասէ թէ եկեղեցին Հայոց ոչ կարէ պարզապէս ասիլ հերետիկոս: Ուրեմն ոչ է անտանելի և հրատարակեցեալ, այլ տանելի և նիւթական հերձուածող¹:

Գ. Երրորդ՝ զի ուղղափառք զնալով յեկեղեցին, ոչ պակասին ի հաւատոց, այլ մանաւանդ հաստատին: Քանզի զուրվ առաւել հմատոյնք քան քահանանայս նոյնին, ի ձեռն վկայութեանց եկեղեցական դրեանց, որք միշտ ընթեռնանին անդէն, յանդիմանէն և յաղթահարեն զքահանայս նոյնին: Զի անթիւ են վկայութիւնք ի ժամերութիւնս Հայոց որք հաստատն զողղափառ հաւատն և մերժեն զմուրութիւնս հերձուածողաց:

Դ. Չորրորդ՝ զի զնալով յեկեղեցին, լինին բարի օրինակ միամայց, Զի մինչ ուղղափառքն առնեն զպարտաւոր պատիւ Սրբազնութեանն, միամիաքն ևս հայելով առ նոսա սովորին. որպէս և իսկ մինչև ցարդ զբազում բարեպաշտական իրս սովորեցան, այսինքն զՊԸՀՅՆ ՔԵՂ Մարդում տաելն. ի ժամ՝ Առեք կերերին երկիր պատանել, և այլք նմանք: Եւ ես մինչ ուղղափառքն են հմտու, և հերձուածողքն ադէտք և պարզամիաք, ողղափառքն մասնակցելով ընդ նոսա, միշտ որան զնոսին: Եւ այս փորձիւ յայտ է, և օր ըստ օրէ լինի զի ուղղափառքն զնոսին դարձուցանեն միշտ, և ոչ ի նոցանէ կարող է զուղղափառ ոք խախա տել ի հաւատոյն:

Ե. Հինուերրորդ՝ զնալով յեկեղեցին, դադարին և շարութիւնք հերձուածողացն: Զի հերձուածողք եկեղեցականք Հայոց, մինչ զշալածանս յարուցանեն, ոչ այնքան վասն հաւատոց առնեն, որքան վասն դադարման յատու կ մարմնաւոր շահից իւրեանց: Քանզի

¹ Աս գերջին պարբերութիւնը ճշմարտանման և հաւանականագոյն էր անցած դարուն առջի կեսին, որ ատեն կը գտնենք Կահապետ, Աշէքսանդր, Աստուածատոր և Կարապետ Կիջմանի կամթողիկոսները, որոնք իրենց հաւատոց դաւանութիւնը Խրկած են Հռոմ ժամանակին Քահանայապետներուն:

մարմնաւոր ապրուստ նոյնոն է ի տրոց ժողովրդեանն, և մինչ ուղղափառքն ոչ զնան յեկեղեցիս նոյնին, պակասին տուրքն, և առ այս նոքին կատալեալք՝ յարուցանեն զշալածանս: Եւ մինչ լինի այս, բազմիցս պատահի, զի և ակարքն ի մէջ ուղղափառաց, ուրանան զշաւատն, և կամ բանագատեալք նողովին զսու բբն Լէօն:

Զ. Վեցերրորդ՝ եթէ ուղղափառք ոչ զնայցին յեկեղեցիս Հայոց, հետեւն բազում հոգեկան վնասք: Քանզի ի բոլոր Անատոլու՝ աւելի քան զերկուասան քաղաքք դտանին (թող զդիւղաքազաքն և զդիւղաքայն), ուր զնն ուղղափառք, յորս բաց եկեղեցեացն Հայոց ոչ զան այլ եկեղեցիք: Եւ այսպէս եթէ անդ ևս ոչ զնայցին, ծնեալ մանկութիւն ոչ երբէք լսելով զմամբրութիւնս և ոչ տեսանելով վեկեղեցական արարուութիւնս, որպէս զանկրօն ոք մեծանան: Եւ թէ պէտ ի տարւոջն սակաւ անզամ ի առնս ուղղափառաց մատուցանին պատարագք ծածուկք, բայց վասն տղայոց չէ օգուտ. զի թագուցանի ի նոցանէ: Արդ մինչ ոչ տեսանեն զլատինական եկեղեցւոյ արարուութիւնս և զշանգիսութիւնս, նաև զշայոցն ոչ տեսանեն: Եւ թէ լսեն ևս թէ առնեն Հայք զայսինս արարուութիւնս, ծաղր թվի նոցա. զի խոսելով հրամարեալք են: Զետեւեալն սորին է, զի այնպէս զարդացեալ մանկունք, լինիցին անկրօնք և անզարիշտք: Եւ զի այս յարտ է անթէ հաւատն սուրբ առանց կրօնից ոչ մնայ անարատ և անքողջ, տափի զնի ի մեծի վասնզի կորսաեան:

Է. Եօթներրորդ՝ մինչ ուղղափառքն ոչ զնան յեկեղեցիս Հայոց, ոչ կարեն զիտել զաւորս տօնից սրբոց և կամ զաւորս պահոց նոցին: Եւ թէ զիտիցին ես, մինչ խոտի եկեղեցին, խոտին և տարբ տօնից և պահոց նոցին: Իսկ ոչ զնն անդ եկեղեցիք Լատինացւոց, սրովք զիտիցին զաւորս տօնից և պահոց Լատինացւոց, և պահոցին: Եւ թէ զիտիցին ես, ոչ է կարելի յայնմիկ երկրի պահել ըստ Լատինացւոց, և այսպէս վերամեան ազատք ի պահելոյ զաւորս տօնից և պահոց: Քանզի զշայոց՝ զորս կարեն, ոչ կամին: և զւատինացւոց, զորս կամին, ոչ կարեն:

Ը. Ութերրորդ՝ ոչ զնալով յեկեղեցիս և այս վնաս հետեւ, զի բազումք յուղղափառաց մեռանին առանց խոստովանութեան և հաղորդութեան: Քանզի յիւրաքանչիւր քաղաքք դտանին ուղղափառ քահանայց, բայց ոչ կարեն ի բաց կալ յեկեղեցւոյն Հայոց:

Արդ ուղղափառք խոսելով զեկեղեցին, խոտեն և զուղղափառ քահանայսն, որք անդ զնան¹: Եւ ի հարկաւորութեան ժամանակին

1 Այս յօդուածը շատ մոտպութեան արժանի է: Եկեղեցիներուն մէջ ուղղափառ քահանայք կը գտնուին ըսելով, կը ցուցըն՝ Միիթար այն ժամանակուն կլերին խան վիճակը: Ու մայսի Միիթարաց այս գրուածքին ժամանակ (1733ին) այս ասանկ էր. այլ նաև անկէ ետքն աւ մինչեւ 1742 որ աւեն կաթողիկոս ընտրուեցաւ Արքահամբ Կիլիկիոյ թեմին վայ, որ կը փակէր իւր իրաւասութեան տակ Կիլիկիա, Փոքր Հայք, Ասորեստան, Պաղեստին, Եգիպտոս և նաև Ամասիա և Տրավելիոն: Աս կը ցուցընէ ուղեղ արաւարանութիւնը: Վան զի եթէ Արքահամբ ընտրուեցաւ կաթողիկոս, ուրեմն Արքահամբն յառաջ կար անսարակոյս ուրիշ կաթողիկոս մը, որուն կը հպատակէին այն ուղղափառ եւլիսկոսուներն, քահանաներն, ժողովութեք ու կ'երթային անխորի Հայոց եկեղեցիները, որ անիկա մեռնելէն եսքը կրտսն ընտրել զԱրքահամբ Կիլիկիոյ տան վրայ կաթողիկոս և Պատորիաբբ: Իրաւ Արքահամբ ընտրուելուն եսքը զանիկա Հայութիւնը ուրիշ ընտրութեան ձեռք զարկին, ու Արքահամբ Հռոմ քաղաք ժամանակը յարմար առիթ սեպելով Միիքայէլ Սեբէցին նատուցին: ասկայն ասիկա եսքի գործք ըլլալով, առջնին վրայ չկրնար ազդեցութիւն ունենալ:

Այս վիճակը ասանկ ըլլալով, Միիթարաց ութերորդ յօդուածը կարծենք թէ բանալի մի է բովանդակ իւր գրուածդին: Ի՞նչպէս:

Պատասխանի: Միիթարաց ժամանակուն վիճակը, այսինքն անցած դարուն առջ կեսը ուղղափառ կլերը գտնուելով Հայոց եկեղեցիներուն մէջ, Միիթարաց մեզէ հրատարակուած զրուածքը և անոր կարծիքը շատ ուելի հաւանակուութիւն ունէր, քան ծէ նոյն ասենուան խիստ կողմանկցութեան կարծիքը: Վասն զի ըստ կանոնաց եկեղեցոյ յաստուածային Հաղորդակցութիւն ըլլալու համար կը պահանջնի պաշտուեսոյ մը եկեղեցական: ուրեմն ինչ ընդդիմութիւն կը ուղղափառաց երթաւու ուղղափառ քահանայից խոստանաւու, անհնեմ հազրդուելու, մկրտուելու, պսակուելու և ալին: Եւ եթէ յանկարծ հանդիպէր հերձուածոյ քահանայ մը, անկից կամ փախչելով, և կամ եղած միաւ արարուութեան անհաւանութիւնին ցուցընելով ուղղափառութիւնին յայունելու: Ասով միթէ հերձուածուաց հետ յաստուածային Հաղորդակցութիւն ըլլալով: Եւնք կարծեր:

Անցած դարուն երկրորդ կեսին մէնք չենք խառնուիք. ասկայն մէկ պարագայէ, այսինքն Ա. Աթոռին Մելքոն Սեղմուեան ասպետին այս նիթիս վրաց գրած «Ա. ինձաւանական — կրօնական ճառը» ըլլատապարտելուն կը հետեղը մէնք և անհաւանական չէր գներ, Ա. կը այս կարծիքը բարբուժին մէրեւէլ և անհաւանական չէր գներ: Ա. կը այս գործքը կարդալու ըլլայ կը անմնէ որ բերած փասերը շատ աեղ կը միանան Միիթար Արքահօր փաստերուն հետ: Յիբաւէ ժամանակը այն ժամանակը չէր ասկայն և այնպէս գտնուեցան աստուածաբաններ, որ մնք ու եթէ ի բարի հաւասա, այլ աստուածաբանական պատճանաներով և երկայն հաստրաւոր գրութեամիք անոր պաշտպան կեցան: Ա. Աթոռին բանած ընթացքէն այսինքն Սեղմուեանին զերքը չդատապարտելուն և աստուածաբանից թույլ տալէն, որ վիճին, կը հետեղընիք, որ եթէ 1786ին այս Հայոց եկեղեցին երթաւու կարծիքը հաւանակութիւն մ'ունէր, առաւել ևս հաւանականութիւն պէտք էր ունենար Միիթ-

ևս ոչ խոստովանելով նոցուն մեռանին առանց խորհրդոց: Քանզի միշտ և յամնայն ուրեք ոչ կարեն ներկայ լինիլ միսնարք և վարդապետք ոչ մտանողք յեկեղեցին, յորոց առնոցուն զերս հուրդու եկեղեցու:

Թ. Իններորդ՝ հետեւի և այս միաս զի մինչ մահուչափ մեղք համարեցեալ լինի զնալն. և բազմաց ուղղափառաց անկարելի է ոչ զնալն⁴. վերահնարի այս զի իրը ի զրօսանս զնայցեն. և մինչ այս անկարելի է լինիլ (զի իրը ի զրօսանս զնայցուն ոչ պարտի ծունդ կրկնել, ոչ զդուխն բանալ, և ոչ զայլ ինչ նման ճողովրդեանն անդ եղելոյ առնել. այլ նման զերանի կանգնիլ անդ, և հայիլ ասու և անդ և ծիծաղիլ, և պատրաստ լինիլ զի հարցանողացն ասիցէ ոչ ի ժամ, այլ ի զրօսանս իրը ի թէատրոնի եկեալ եմ), հետեւի զի առնիցեն զեկեղաւորութիւնս, և բաց ի կեղծաւորութիւնէր, արհամարհիցեն զմարմին և զարին քրիստոսի, որ է ի սեղանն: Քանզի ոչ իսկութեամբ, այլ իրրու վասն ծաղրառութեանն երկիր պաղանեն վասն երկիւղիլ մերձակայիցն: Քանզի եթէ ձմարտութեամբ և սրտի երկրպագիցեն, կամակածին ի խղճէ մասց զի հետեւի թէ վասն երկրպագութեան եկեալք են և ոչ վասն զրօսանաց և ծաղրառութեան: Եւ (Եթէ) բնաւ ոչ երկրպագիցեն, երկնչին ի մերձակայից, զի մի անդէն բոնցակոծ լիցին: Վասն որոյ առ ի զերծանիլ ի ներքին և յարտաքին երկիւղից, արտաքուստ երկրպագից, և ի ներքուստ ծաղր առնեն, որպէս զղինուորսն Պիղասոսի, որք ծաղր առնելով զբրիստոս, երկրպագի ին նմա:

Ժ. Տաններորդ՝ մինչ ուղղափառք ինքեանիք ոչ զնան, ի հարկէ և զորդիս իւրեանց ոչ պարտին առաքել անդ ի մկրտիլ, և կամ ի սրակիլ և կամ զմնուելու իւրեանց ի թալել²: Վասն զի այս

թարաց ժամանակը, որ ատեն կլերը խառն էր եկեղեցեաց մէջ և չորս կաթողիկոսանքնի իշմածնի իշենց հաւասար գաւանութիւննին իրկած էին Հոռոմաց Արքազան Քամանայալեստոց:

1 Բովանդակ յօդուածը իիստ կողմանկցութեան գեմ է, որ այն ժամանակները մահուչափ մեղք կը համարէր Հայոց եկեղեցիներն երթաւու: Աղեմէս Ժ-Ա. ինձայն երկրորդ խնդիրն աւ այս նիթին վրայ է: Ա. վ. վ. ինձաւ խընդութիւննիք փոփէ և ուսեալ վարդապահաց թուղթ առու այս մէկնութիւն կը առնենք իւրեան կարութ չէ մէկնութիւն կարութը:

2 Խորհրդոց ընդունելութեան վրայ է: և բովանդակ յօդուածը իիստ կողմանկցութեան գեմ համազարական զրուած մի է: Սակայն այս ինսէրը ոչ գե-

մածագոյն մասնակցիլ է ընդ նոսին, քան թէ ինքեանք զնայցէին յեկեղեցին նոցին: Եւ զի յերկիրն թու բբաց անկարելի է առանց յանձն առնլոյ զմահ, առնել զմկրտութիւն, զպսակ և զթաղումն իւրաքանչիւր ոք ի տան իւրում. ուստի հետեկի զի կամ մոռանցին, կամ յաշխարհէ իւրեանց ելեալ յերկիրն քրիստոնէից զնայցեն, կամ առանց մկրտութեան պսակի և թալման մնայցեն, և կամ յեկեղեցին նոցուն միամիտ եղեալք զնայցեն: Եւ զի չի հնար՝ զի ոք ի ծածուկ զերախայն մկրտիցէ, և ասիցէ թէ ոչ կամիմ յուել յեկեղեցին առ ի մկրտիլ. վասն զի թէ մասնիցին թուրքաց, հրաւիրին ի թլփատիլ, զի առանց օրինաց ապրեալքն ոչ ապրեցուցանին ի թուրքաց: Եւ զի ոմանք ուղղափառք, որք ինքեանք ոչ զնան ի ժամ, և ի հարկադրիլն մկրտութեան, պսակի և թալման ինդրեն մասնակցիլ, զերիս մեծագոյն վնասս դործեն: Նախ՝ զի զրո խոտեինն ընդունիլ սկսանին վասն երկիւղի մարմնականի: Երկրորդ՝ զի խղճիւ մահուչափ մեղիւ մասնակցին, և այնու խիկապէս մեղանչեն մահուչափ մեղք: (զայս ասեմ խղճիւն իւրեանց լինիլ մեղք: Զի եկեղեցին ոչ հրամայեաց նոցա ոչ մասնակցիլ, զի ի զանցառութենէ հրամանին մեղանչիցին: այլ ինքեանք են հեղինակ այսմ վճռոյ, թէ որ զնայ մեղանչէ), և միշտ են ի նոյն մեղք: Զի թէ և զղջան և խոստովանին և առաջազրեն ոչ զնալ, ոչ է ճշմարիտ. քանզի չէ հրամարեալ ի կնոջէ և կարէ վերստին ծնանիլ զզաւակ: Երրորդ՝ զի մինչ լսեն հերձուածողք, թէ ումեմն ուղղափառի ի ժամս նոցուն ոչ զնացողի եղեալ է զաւակ մկրտելի և կամ ունի զուստր և զկուստր պսակելի, սկսանին բայսակի նոցին զմկրտութիւնն և զպսակին, բերելով զայս պատճառ, թէ բոլոր տարին ոչ է եկեալ յեկեղեցիս մեր, և մեք ոչ պարտիմք մկրտել և կամ պսակել զզաւակ նորուն մինչեւ եկեալ առ մեղ զղջասցի և տայցէ զնոր դաւանութիւն: Եւ սոյնպէս բազմիցս հանդիպի բազմաց ուղղափառաց սահիլ և յուրացութիւն ուղղափառի հաւատոյն, և այն որ ընդ մասնակցիլն

Կրնար լուծել, եթէ կղեմս ԺԱ առաքելական իշխանութեամբ 1719ին տուած վճռովք լուծած լըլպար: Մինիթար Աբբահօր յօդուածը խորհուրդները բնուունելու անկարելութիւնը կը ցուցընէ, և իխտո կողմակցութեան գէմառարկութիւն մի է առ մարդ բանիւ. սակայն ինդիրը ասով շլուծուիր: Կղեմս ԺԱ-ին վճիռն է, որ առաքելական իշխանութիւնը կը ցուցընէ, և ինդիրը կը լուծէ:

ընդ նոսին խղճէր, սկսանի զսուտ աղանդոյ դաւանութիւն տալ վասն երկիւղին, և նղովել զսուրբն Աստուծոյ:

ԺԱ. Մետասաներորդ զիաելի է, զի որք ասեն ոչ մտանել ուղղափառաց յեկեղեցիս Հայոց վասն խորշելոյ ի մահուչափ մեղէ, կամ վասն այնորիկ ասեն, զի ի սրբոց զրոյ աստուած այնոց է արդելեցեալ. կամ վասն այսորիկ ասեն, զի ի սուրբ սինողոսաց ունին զբացործեցեալ ինչ. և կամ վասն այնորիկ ասեն, զի սուրբ եկեղեցին Հոօմայ, որոյ վճռոյն ամենայն ոք պարաւական է հնագանիլ, այժմ այնպէս կամի և վճռէ, զի Հայք ուղղափառք ոչ մտանիցին յեկեղեցիս Հայոց հերձուածողաց, եթէ անկարելի իցէ նոցին յայլ ուրեք կատարել զմկրտութիւնն զպսակին և զթաղումն¹:

ա) Եթէ ասիցի առաջնն, թէ ի սուրբ զրոց զոյ վՃիռ և հրաման, զի ուղղափառք յեկեղեցիս այնպիսի հերձուածողաց ոչ մտցին և աղօթիցին, զի ի հոգեորս ոչ լինիցին մասնակցեալք ընդ նոսին: Որքան առ այս պատասխանեմ:

Երգելով զուղղափառն ի մասնակցութենէ հերձուածողաց առայս միայն՝ զի մի մասնակցիցին ընդ նոցին ի հողեարս, ոչ է յիշրաւանց բնականաց և կամ աստուածայնոց: Քանզի Քրիստոս ոչ ետ մեղ զհրաման ինչ զայսմանէ իրէ: Մինչ ըստ Սրբոյն Թօմայի (1. 2. Խ. 108. Պ. 4. և 2.) և այլոց բազմաց, բաց ի հրամանայ՝ որք զհաւատոյ և զնորհրդոց, Քրիստոս զայլ ինչ հրաման ոչ ետ մեղ: Եւ զարձեալ հաստատի այս: Եթէ ոչ մասնակցին ընդ հերետիկոսաց և հերձուածողաց իցէր ի հրամանաց աստուածայնոց և սուրբ զրոց, ոչ երբեք կարէք մնօրինիլ ի սինողոսաց և ի քահանայապետիցին Հոօմայ: Արդ Ս. Ժողովի Նիկոյ՝ ի դլուխն 15. ի կանոնն 16. և Ս. Ժողովի Քաղեղոնի ի

¹ Մինիթար Աբբահօր այս յօդուածին մէջ դրան աստուածարանական պատճառութեան, խիստ կողմակցութեան աստուածաբանները երբէք չեն կրցած պատասխան տալ. վասն զի մնօրաբակուսելի ճշմարտութիւն մի է, որ Եկեղեցին՝ ի բաց առեալ ծանօթ երբեք դէպէբէրը սուտ աղմոդոյ դաւանութեան, զայթակղութեան, և խոսրութեան, կը նայ ուրիշ դէպէբէրու մէջ մնօրինել, և է ոյլ տալ: Անոր համար հարկ չկայ կցիցեալ մենութիւն մը առեղջելու և ըսելու թէ Հոռոմ լուկաց թոյլ տուած էր ուղղափառաց քանի մը խորհուրդներ հերձուածակողման պաշտօնեաներէն ընդունիլ. այլ մասնաւանդ ուէսք ենք ըսել, թէ կղեմս ԺԱ Քահանայապետը իւր առաքելական իշխանութիւնը թոյլ տուած հանելով 1719ին վճիռը, ինչպէս որ կըսէ Մինիթար Աբբահօր այս յօդուածին բնթացքին մէջ:

գործն 46. ի կանոնն 44 տնօրինեցին, զի առանց վնասու հաւատայն իւրոյ՝ ուղղափառն կարիցէ պատկիլ ընդ հերթիկոսի: Նմանապէս և այժմ ներկայիս՝ եկեղեցին Քրիստոսի թոյլ տայ մասնակցիլ ուղղափառաց ընդ հերթիկոսաց ի բազում զառառս ի ձեռն խորհրդոյ պատկին: Խոկ ի Կրիտէ ս կղզ ո՞չն, ի քաղաքն Քոռֆէզ, թոյլ արի Լատինացւոց զնալ յեկեղեցին Յունաց, և մանաւանդ մեծաւ ջերմեռանգութեամբ յեկեղեցին սրբոյն Սովորիդանի, որ է Յունաց: Եւ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ յայսնապէս ի միում տաճարի աղօթեն և պատարագեն Համբայիք ընդ Հայոց և Յունաց, և ի միասին ելանեն ի թափօր: Որ ոչ կարէր լինիլ ոյն պիսեաց անօրինումն, եթէ իցէր աստուածային հրաման ոչ մասնակցիլ ընդ հերձուածողաց ի հոգեորս: Եւ զարձեալ ի Ժողովն Կոստանցիու Հինգերորդ Մարտինոս Պապն անօրինեաց ի վճիռն իւր, զի կարիցէ լինիլ մասնակցութիւն ընդ հերթիկոսաց և հերձուածողաց, որք չեն հրատարակեցեալք, այսինքն չեն յատուկ անուամբ նշանակեցեալք, թէ ընդ սոցին մի լիցի մասնակցութիւնն Ուրեմն ոչ կարէ լինիլ թէ իցէ սոյնպիսի արգելումն յաստուածայնոց իրաւանց:

Խոկ ի յասացեալ սիւնիդոս առարեցան երկու թէութիւնք, սյսինքն առանց վնասու հաւատոյ և ընդ այնոսիկ որք չիցեն հրատարակեցեալք և անուանեցեալք: Եւ այսոքիկ եղան յոյժ խոհեմապէս. քանզի եթէ ոչ զնիցէ ին զայս թէութիւնս թէ առանց վնասու. միամիտ ժողովուրդն մասնակցէր ընդ հերձուածողաց ի հոգեորս նաև հանգերձ վնասու հաւատոյն, նաև հանգերձ վասնդիւ կործանման իւրոյ, և լինիւր անցանող զաստուածային իրաւամբ: Զի ուր լինի ուրացութիւն հաւատոյ և կամ վտանգ կործանման, անտի զդու շանալ պարախէք ըստ աստուածային իրաւանցն, զի ասէ Տէ ըն. Որ ուրացի զիս առաջի մարդկան, ուրացաց զնա առաջի ձօր իմոյ: Եւ եւս. Եթէ ակն քո գայթակշղցուցանէ զքեղ, խեեա զնա և այլն: Ուստի եթէ իցէ եկեղեցի ինչ հերձուածողաց, ուր ուղղափառն ի զնալն իւր զիտէ զնիքն մնանելոց ի թիւր վարդապետութեանց նոցին և կործանելոց, և կամ զիտէ զի ի զնալն իւր առնելոց է անդ զսուտ առանդոյ զաւանութիւն, ոչ կարէ զնալ. զի աստուածային հրամանաւն արգելանիմք ոչ ուրանալ զՃշմարտութիւն հաւատոյ առաջի մարդկան. նաև ոչ զնել զմել ի վասնդի կործանման ի հաւատոյ:

Եւ սուրբ եկեղեցին ևս ոչ կարէ տնօրինել ումեք զի հանդերձ վնասու հաւատոյն իւրոյ մասնակցիցի ընդ հերձուածողի: Խոկ զմիւ թէութիւնն զըր եկին, թէ որք ոչ իցէն հրատարակեցեցեալք և անուանեցեալքն եթէ ոչ իցէն եղեալ, հետեւր՝ զի իշխանութիւն սրբոյ եկեղեցւոյ կապիցիւր, և զոչ ոք հերձուածող կամ զմանադրեցեալ այսուհետեւ կարիցէր անարժան մասնակցութեան առնելով պատմել: Աան որոյ եդ զայս թէութիւն, զի յամնայն ժամ՝ մինչ կամիցի պատմել զհերձուածողս և կամ զմանագրեցեալ, կարիցէ հրատարակելով և անուանելով զնովին՝ առնելով անընդունակ և անարժան մասնակցութեան ուղղափառաց:

Եթէ ասիցի երկրորդն, եթէ ի սուրբ սինոգոսաց զոյ վՃիռ, զի մի լինիցի մասնակցութիւն ընդ հերձուածողաց և բանադրելոց: Որքան առ այս պատմախաննեմ:

Ճշմարիտ է, զի ոչ մասնակցիլ ընդ հերձուածողաց և բանադրելոց է եկեղեցական վՃիռ և հրաման, զորս ըստ ժամանակին և պիտանաւրութեան միշտ ի զործ էած եկեղեցին և ի զործ ածէ: Բայց զիտելի է, զի եկեղեցին զվՃիռն և կամ զհրաման իւր այսպէս ոչ առնէ, զի միշտ և յամնայն ուրեք ի զործ ածիցի, և ամնելին անանօրինելի լինիցի: Եւ պատճանն է. զի եթէ հրաման և վՃիռ եկեղեցւոյ ոչ կարիցէ լինքնէ եկեղեցւոյ տնօրինիլ, հետեւ պակասութիւն իշխանութեան եկեղեցւոյ և զլիոյ նորին, այսինքն սրբազնի պապին: Կա ևս հետեւ ոչ լինիլ հրաման եկեղեցւոյ՝ պոլ աստուածային, և այնպէս ելանէ ի սահմանէ և ի զլիոյ իւրմէ: Աան որոյ նախ զիտելի է, զի սուրբ եկեղեցին ի վաղնջուց ժամանակաց սահմանեաց զըրէնս և արար զվՃիռ, զի ընդ բանադրելոց և ընդ հերձուիկոսաց ոչ լինիցի մասնակցութիւն և զայս արար առ ի պատիմ նոցուն. զի այնու չարչարիցին, և թերևս յամօթի հարեալ պաշտարիցին, որպէս ասէ սուրբն Թօմաս, թէ ոչ լինիլ մասնակցութեան ընդ անհաւատից, է առ այս, զի մի լորիցին ուղղափառքն. խոկ ոչ մասնակցիլ ընդ հերձուածողաց և բանադրելոց է առ այս, զի պատմիցին հերձուածողն և բանադրեալքն: Եւ սոյնպիսի արդելումն մասնակցութեան ընդ հերձուածողաց ի հնումն ժամանակի այնպէս եղն յեկեղեցւոյն Քրիստոսի, զի նաև ի մարմնաւրս ոչ լինիր մասնակցութիւն ընդ հերձուածողաց և բանադրելոց: Եւ զինի ժամանակաց մինչ ետես, զի պատիմն վերագառնայր նաև ի յուղ-

Ճուածողաւ թիւնն մնլորեալ Հայքն առնիցեն . իսկ զօլատիճն ուղղա-
փառ Հայքն կրկիցեն :

զ) Բայց եթէ ասիցի երրորդն, թէ սու ըբ եկեղեցին Հուօմայ՝
որոյ վճռոյն պարտական եմք հնազանդիլ, նա այժմ՝ արդելու
զա զջափառսն Հայոց ի մասնակցելոյ ընդ Հայոց հերձուածողաց,
թէպէտեւ կիսել, զի արտաքոյ եկեղեցւոյն Հայոց ոչ գոյ մեղ
հնար մկրտել զերախայս մեր, առնել զպսակ, և թաղել զմե-
ռեալս։ Արքան առ այս պատասխանեմ, թէ ոչ է Հշմարիս։

Զի սուրբ զահն Հռօմայ ոչ երբէք արար զայս վճիռ : Կաե
ոչ առնէ , որբան տեսանէ , զի ուղղափառքն Հայոց ոչ ունին վասն
ինքեանց զյատուկ եկեղեցի : Քանզի զոլով մայր զթած , ոչ առ-
նէ զայս վճիռ , յորմէ Տեսակից անկրօն լինիլ որդւոց խրոց , ա-
ռանց եկեղեցոյ մալ , և զժամերգութիւնն ոչ երբէք լսել , ա-
ռանց մկրտոթեան մնալ և կամ մահուչափ մեջք մկրտել : Եւ
վերջապէս զնել ի ներբոյ այնպիսի բեռան , յորմէ սուր ի վերայ
պարանոցի որդւոց խրոց Տեսակիցի , և կամ ուրացութիւն հաւա-
տոյն Քրիստոսի : Արդ մինչ սոյնարևսի վճիռ և կամ հրաման է
միայն եկեղեցական և ոչ աստածածյին , որպէս ցուցալ ի վերոյ ,
ապա զիարդ կարելի է , զի Խկեղեցին Քրիստոսի , որ զշրաման
և վիճու իւր առնէ յօդուա և ի հեցութիւն որդւոց խրոց , այժմ
զներհակն զարձուցեալ առ ի վեաս և ի կորուստ նոցին առնիցէ :
Քառ լիցի զայս ասել զնմանէ : Աւսափ ոշ եղեալ բանից , մի
կարծեսցուք զանկարելին :

Բայց եթէ ասիցի՞ . ահա ի թվին քրիստոսի 1709 եղև վճիռ
ինչ իւսօմ , թէ ոչ է պարտ Հայոց ուղղափառաց զնալ յեկե-
ղիցիս Հայոց : Պատասխանիմ . այդ վճրու ոչ եղև այդպէս , այլ
ի յոմանց յարեւելս այնպէս հուշակեցաւ : Բայց Շմարիտն այս է ,
(որպէս և տեսանի յօրինակս նորին ի ստորկ) զի ի Սպահան ուր
ոց ուղղափառաց Հայոց յատուկ եկեղեցի , նաև զոն բազումք ե-
կեղեցիք Լատինացւոց , ուր կարեն ուղղափառք Հայոց աներիկող
զնալ . նաև առնել զմկրտութիւն : Եղև վիճարանութիւն ի մէջ
պատրոց : Ոմանք ասէին թէ Հայք ուղղափառք կարեն զնալ ի ժամն
Հայոց , և ոչ է հարի զնալ ի ժամն Լատինացւոց : Իսկ սմանք
ասէին թէ ոչ պարտին զնալ ի ժամն Հայոց , այլ Լատինացւոց :
Եւ զի այս վէջ ներկայացաւ առաջի սրբոյ ժողովոյն ի Հոսօմ : Արդ
ուրք ասէին զնալ ի ժամն Հայոց առբերէին զբանս կոստանցիու-

Ժաղովոյն, որ ի վեր անդր եղաւ, որ Մարտինոս Պապն թոյլ տայ ուղղափառաց մասնակցիւ ընդ հերձուածողաց, որք չեն հրատարակեցեալք: Խոկ որք ասէին ոչ է պարտ, նորին պատասխանցին թէ մինչ դոյն նաև եկեղեցի ուղղափառաց, որ կարեն զամնայն հօգեոր պիտոյս ընդունիլ, ոչ վարկիմք պատեհ: Աւստի և սուրբ ժողովն վճռեաց, թէ ոչ է պատեհ զ դնալն:

Արդ աստին աւեսանի զրազում տարբերութիւնն: Կախ զի նոքացոցին սուրբ ժողովայն, թէ անդ զնն բազումք եկեղեցիք, յորս ուղղափառք Հայոց կարեն զամնայն հօգեոր պիտոյս իւրեանց ըստու: Վասն որոյ հետեւի յոյժ բարենքւո՞ւ զի ասիցի թէ ոչ է պատեհ զ դնալն: Քանզի եթէ նաև ի մէջ Փոքրին Հայոց, որք են ընդ աէրութեանը Թուրքաց, իցէր եկեղեցի ուղղափառ, և կարելի լինիցիր անդ զնալն: Իրաւի պատեհն այն էր, զի ուղղափառք յեկեղեցին ուղղափառաց զնոյցէին և ոչ յեկեղեցին շարափառաց: Երկրորդ՝ զի նորին վիճեցան ի վերայ եկեղեցւոյն Սպահանու, որոյ եպիսկոպոսին և քահանային ունին զյատուկ զորոց առ ի տասցանել զհերետիկոսութիւնն և են կարի չարք. և ոչ երեւք վիճեցան վասն բոլոր ազդին: Ուրեմն նոյն վճիռն վասն նոցա միայն եղև: Եւ հաստատութիւն ասացելցոյ յայտ է այսու, զի մինչ թվին Քրիստոսի 1718 Միթթար Արքայն ներկայացոյց նոյնայ սրբոյ ծողովոյն զնոյն վճիռն, և ասաց թէ ահա զայս ձեր վեհու կամին ոմանիք տարածել ի վերայ բոլոր ազդին, նոյն սուրբ ժողովն արար զայլ վճիռ վասն բոլոր ազդին, որ ասէ թէ ուղղափառք վիճորհութեան հարցանիցին վարդապետաց և զդոշանայցեն ամենեին ի սուս ալանդոյ զաւանութիւնէ, յորողայթէ, և ի կործանանէ: Այսինքն ի զնալն իւրեանց յեկեղեցիս հերձուածողաց Հայոց՝ խորհրդով զիանոց զնասցեն, զի մի զուցէ տղիտութեամբ տայցեն զսուտ աղանդոյ զաւանութիւնն և կամ կործանիցին ի հատառոյ: Եւ զի այս նոր վճիռ եղեւ այնպէս բացայացաւ. զի մի յայսմ հետէ զնոյն միւս վճիռն առիջ առնլով սաստար վարկիցին ուղղափառք, թէ սուրբ եկեղեցին Հոօմայ ի վերայ ուսոց իւրեանց եղեալ իցէ զայնպիսի բեռն, որ առանց վտանդի կենաց իւրեանց ոչ կարեն տանիլ, այսինքն արարեալ իցէ վճիռ ինչ, զոր եթէ պահիցին, պարտին կամ մեռանիլ և կամ յաշխարհէն իւրեանց ելանել:

Յայտ է ուրեմն յասացելցոյ, թէ որ ոչ մասնակցիւ ասեն

Հայոց ուղղափառաց ընդ հերձուածողաց, ոչ ըստ աստուածայնոց իրաւանց կարեն ասել, ոչ ի վճռոց սինհոգոսաց և ոչ ի ներկայէ սրբոյ եկեղեցւոյն Հոօմայ: Այլ միայն թէ ի միտս իւրեանց վարկին, թէ ըստ երիցն ևս ասն: Սակայն Ճշմարիտն այս է, զի վասն ունաց յատիկից օգտից իւրեանց երեակերսի նոցին այն, ոչ մտածելով զանտանելի վնասն, որ յայսմանէ հետեւի բոլոր ուղղափառաց ազդին Հայոց: Կան զի զինի սակաւ ժամանակի խափանի ուղղափառութիւնն: Քանզի առանց եկեղեցւոյ և առանց կատարման խորհրդոց, ոչ կարէ պահիւ քրիստոնէական հաւատան: Եւ զի նորա ևս որք ասեն, ոչ է պարտ մասնակցիւ, դիտելով զի առանց եկեղեցւոյ թէ կարէ տեսել կարծիք իւրեանց, Զանացին և ջանան լինիլ յատուկ եկեղեցի վասն ուղղափառաց, որ է իր անկարելի, որքան տեէ տէրութիւն անհաւացից: Եւ եթէ ից՛ ը այս իր կարելի և կանգնիցիւր յամենայն քաղաքք եկեղեցից յատուկ վասն ուղղափառաց, արգարե յայնմ ժամանակի ոչ պատեհ զնալ յեկեղեցիս հերձուածողաց:

ԺԲ. Երկոսասաներորդ՝ զիտելի է, զի եթէ ուղղափառք ոչ զնոյցեն յեկեղեցիս Հայոց, ոչ կարէն և յացանել զսմանս պատուիրանս եկեղեցւոյ: Արգոն. եկեղեցին հրամայէ և կամի, որպէս յայտ է ի վճուոյն զոր արար զթվականով 1700ին, ուր պարտաւորէ զամնայն ուղղափառուն արեւելան՝ պահիւ զուիթս եկեղեցւոյ իւրայ, և ոչ երբէք առնլով զլատինացւոցն՝ թողուլ զիւրեանցն: Արդ եթէ ոչ զնոյցեն յեկեղեցին, առանց առնլով զլատինացւոցն թողուլ զիւրեանցն: Վասն զի զայն որ իւրեանցն է՝ մոտանան. և զայն որ Լատինացւոցն է՝ ոչ ուսանին, մինչ յայն կողմանս եկեղեցի Լատինացւոց ոչ զայ: Եւ այսպէս լինին որպէս զամնիրօն աղդ ինչ, որ է մեծալունեղ վնաս, և հետեւ ցուցանէ զանաստուածութիւնն: — Գարձեալ պարտաւորին ամենայն քրիստոնեայք պահիւ զպատուիրանս եկեղեցւոյ: որոց մինն է տեսանել զպատարադ յաւուրա տօնից: Արդ եթէ ուղղափառք Հայոց ոչ զնոյցեն յեկեղեցին Հայոց՝ ի հարկէ ի բազում աւուրս տօնից մնան առանց տեսութեան պատարադի: Բայց ոչ երբէք յայտ եղև նոցա ի սրբոյ Եկեղեցւոյն զի հրամայիցէ նոցա ոչ զնալ յեկեղեցին Հայոց ի տեսանել զպատարադ. զի այնու

ասիցէին թէ ի ձեռն յետնոյ հրամանին աղատք վերամնամք յառաջնոյն : Եւ եթէ ասիցի ընդդէմ այսմ, թէ պատրագողն շարափառ զոլով, նորին ազօթքն ոչ օդնէ տեսանդղացն զարտարագ նորին : Պատասխանեմ . թէ և ոչ օդնիցիս յաղօթից նորին¹, սակայն տեսանես անդէն զմարդին և զարինն Քրիստոսի, և երկիր պադանես նմա . և այս բաւական է քեզ: Նաև զի որդիք քո զնալով ընդ քեզ յեկեղեցին, ուսանին ի մանկութենէ վերկրպաւ գոյթին մարմնոյ և արեան Քրիստոսի, և ոչ զարգանան որպէս զանկօն ոք: Դարձեալ եթէ ասիցես յոմանն քաղաքս ի տարոջն երիցս անզամ նզովք երդեն ընդդէմ սրբոյն Աւոնի, և զիարդ կարէ ոք զնալ: Պատասխանեմ . թէ ի յայնս աւուրս մի զնար ի ժամ: Եւ եթէ յանկարծ անդ զտանիցիս՝ ել ի զուրս . և եթէ Տարցանիցիս յութքէ, ծանո զքեզ զոլ աւզափառ, և վասն այս նորիկ ելանող ի զուրս, զի մի լուիցես զայնպիսի նզովս ընդդէմ սրբոյն²:

¹ Մլիկթար Աբբահնօր հոս գրուցածը ըստ ամենայնի հակառակն է տասը կանոնաց Եթորդ Նախագասութեանը, որ Վենետիկի օրինակին մէջ Կորդն է ։ Ասկից կը հետեւի ևս, որ այն առաջ կանոններ ըստուած գրութիւնը Մլիկթարաց է ։

2 Եկեղեցին Քրիստոսի Հայրաւուորեր իւր որդիկը Հերձուածոյ կամ հերետիկոս քահանայի մը պատուաբագլ տեսնելու ի պակասութեան ուղղափառ քահանայի: Միիթեարաց Արքահօր այս երկուասաներորդ յօդուածը իմանաւու ենք իւր ուրիշ տեղուանք գրած սեղմանիքը կամ թէ Եւութիմաներովը: Այս բնըն նտի՞ այն տեղերուն համար ուր որ Կղեքը խան էք և ուղղափառ քահանայը դեռ կային եկեղեցիներուն մշջ. և երկրորդ՝ այն Կողմերուն համար ուր Լատինացոց Եկեղեցի չկար, և կրնար զացէ սովորութիւնը շարունակուիլ առ ժամանակ մի խորհրդով զիտանոց ըստ Վճռոյ Կընեմց ծն-ի, ինչպէս շարունակուեցա Խորհրդոց ընդունելութիւնը: Այս ըսկէլու ենք մանաւանդ այն տեղերուն համար, ուր որ Կղեքը չար էք և հալածանք չկար:

Ըսդհանրաբաէս խօսելով, այն ժամանակներուն վրայ մեր գտառատանը ջանալու ենք միշտ մշղմել և չափաւորել, ունենալով մեր առջեւ յիշեալ Քահանայապետին վճիռը: Այսուս ընելու ենք նաև Միթիթարայ գրուածքին նկատմանը: որպէս զի շըլլայ թէ շատ բարի մարդիկ, որ Աստուծոյ առջեկ կրնան արդարացած ըլլալ, մեր յանդուզն գտառատանաւը գտառապարտած ըլլանք: Զափազնաց խիստ կօզմակցութենէն մէկը կ'երեկայնաև Մռնս. Մարին, որ իւր առաւձ պատասխաններուն մէջ կը զօրուցէ առանց զանազանելու թէ Ի՞ւշ? Հայոց ազգը Եղմարտապէս հէրծուածող է: որ մէսք էր զանազանել, ինչպէս ըրած էն 50—56 տարի եաբը Ա. Եւսեանիկ Միթիթարեան Հարք. 1781ին Մարտի 10ին առ. Ս. Ճ. զօրիշ տուած թաղթերնուն մէջ, և Ս. Ֆողովը գոհ եղած է այս պատասխանով: Այս չզանազանելու ընթագրը բանած է Մռնս. Մարին իւր բոլոր պատասխաններուն մէջ, այսինքն կուսանոնուագոյնը մի-

Եւ վերջապէս եթէ ասիցէ ոք առ բնաւ ասացեալս զայս բան։ թէպէտ վասն այնպանեաց հարկաւորութեանց՝ զօրս ունին ողջափառքն, և վասն այնորիկ զի եկեղեցին Քրիստոսի ոչ արդեւ զնոսին ի գնալոց յեկեղեցին Հայոց, կարեն առանց մեղաց գնալանդ, և ընդունիլ զմիրառութիւն, կամ պատկիլ, և կամ թաղել զմեռեալս։ սակայն ոչ է պարտ ասել ժողովրդեանն թէ կարեք գնալ առանց մեղաց։ այլ միշտ ասելի է՝ թէ ոչ է պարտ և է մեղք, և ջանալ զի որքան կարելի է, ոչ զնայցեն։ Եւ պատճառն է, զի թէ թոյլ տայցեմք գնալ, սակաւ առ սակաւ ընտանեկցին ընդ հերձուածորդաց և կապակցին սիրով բնադ նոսին, և այնու մոտայեալ զուղղափառ հաւատն՝ զինի ժամանակաց լինին որպէս հերձուածորդ։ Ուրեմն զի մի այս լիցի, արդէն պարտ է զգուեցուցանել զուղղափառն յեկեղեցեաց, ի ժամանակարգութեանց և ի պատարագաց նոյին և յամնից արարողութեանց, զի այսուհաստուածու մնացեն յուղղափառ հաւատս¹։

Պատասխանեմ նախ եթէ ասիցեմք ուղղափառաց ոչ է պարտ գնալ ի ժամ, և է մեղք. նոքա ոչ կարելով ի բաց կալ վասն հարկին իւրեանց, դնան տակաւին: Բայց այս միայն լինի նոցա, զի որպէս զմահուչափ մեղք համարեալ զնան, և այս է ներկայ վնաս և կորուսա հոգւոյ նոցին: Եւ զի՞նչ օդտէ մեղ յապաֆայ վնասուէ զդուշանալն, որյ հետեւին չէ սաոյդ: Եւ աղնակէս է ընդդէմ իրաւ անց զի ոչ կարեմք զործել զշարն, զի եկեսցէ բարին, այս ինքն զնել զժողովուրդն ի սաոյդ մեղս վասն զդուշանալոյ յանստոյդ ապագայէ: Եւ եթէ իցին ոմանք, որ ոչ երբէք զնայցին յաղօթս, տակաւին նաեւ նոքին դնին ի մեծի վասնոց

Նակ աչքին առջև ունենալով, որ Լատինացւոց Եկեղեցիներ շատ կային, բասմառորդ անցած է առ ընդհանուրին առանց միա զնելու կլեմայ ԺԱԿ Քրիստոնյան, որ բարոր Ազգին համար տրուած էր: — Այս է մեր կարծէքը Միթմարաց Աւրահաօր Ժիրորդ յօդուածին նկատմամբ. ավայս եթէ գոնուի մելու որ սյս մեր կարծէքը հաւանական չհամարի, այնպիսին կը խարենիք մեր յառաջարանին վերջը զուցածներնուու, թէ Միթմար Աւրահաօյր Եկեղեցի չէ, Քահանայապես չէ, այլ սոսկ վարդապետ մը որ կրնայ սիստիլ, և այն:

1 Խոհան կողմանկցութեան այս վախը չենք կը մար ըսել թէ բոլըովին առնչին էր. մինակ տէսքը չեր առարկութիւնը այն խիստ և արտառց ձեւի տակ խոթել, այլ պէտք էր ըսել. «Արդէս զի շըլլայ թէ բարի սերմը որումն մէջ խղդուի ու կարսուի, պէտք ենք ջանալ հետաքննէտ իրարմէ զատենլու»։ Ան առն ովուշ իմասն մը կ'ունենար, և պատասխանը աւելի զժուար կ'ուրաք:

կորսական . զի ոչ զոլով այլ եկեղեցի , ուր դնայցեն , մոտանան զքրիստոնէական կրօն , և մնան առանց խորհրդոյ : Եւ ի պստ կիւն հարկաւորին զմօլայս թուրբաց բերել և ներկայացուցանել առ ի առնել զքէպին¹ , որ է մեծագունեղ չար :

Երկրորդ պատասխանեմ , թէ այն ապագայ կասկածելի վնասն , զի ուղղափառքն զնալով ի ժամ՝ սիրով հերձուածողաց կապակցիցին , և այնու մոլորիցին , ոչ երբէք կարէ հետեւլ : Եւ պատճանն է . զի ուղղափառք այնքան զզուեալք են ի հերձուածողաց , մինչ զի թէ հարիւր ամս ապրիցին իւրաքանչիւրքն , և հարիւր քարողիչք յորդորիցին զնոսա պակասեցուցանել զզուումն ի հարիւր աստիճանէ զմին՝ ոչ կարեն պակասեցուցանել : Եւ նշան սորին յայտ է այսու , զի հայ անունն որ ազյի անուն է , և ոչ աղանդոյ , ուղղափառքն յայնմանէ ևս են զզուեալք . և եթէ իցէր հնար՝ ջնջէին զհայ անունն նաև . յիւրեանց ինքեանց : Եւ մինչ այս այսպիսէ է , զնարդ կարելի է , զի ընդ նոսին կապակցիցին սիրով :

Դարձեալ է և այլ պատճառ . զի հերձուածողքն վասն տղիտութեանց և անհամագունեղ կոսկիտութեանց իւրեանց , այնքանեալ յիմարութեամբ վարին հանապաղ , զի եթէ ուղղափառքն նաև ջանայցէին սիրել զնոսին , և կամ ամործիլ ի նոսին , առ կաւին ոչ լինիւր ի մէջ նոցա սէր և կապակցութիւն : — Ուրեմն մերամայ թէ ոչ իցէ պատճառ ինչ , յորմէ շարժեալ զրկիցեմք զուղղափառն յեկեղեցեաց իւրեանց : Վասն զի եկեղեցիցին այնք մանա անդ են ուղղափառաց , քան հերձուածողաց : Զի ի սուրբ հարյն մերոց ուղղափառաց հիմնեցան և կարդադրեցան : Եւ զրեթէ հերձուածողք ի ձեռն բանութեան Տաճկաց դան մտանեն յեկեղեցին մերս : Եւ ոչ եթէ մեք զնամք յեկեղեցին նոցին : Եւ զի մտանելով մեր անդ օր բատ օրէ բաղմանան թիւք ուղղափառաց , և շահեցեալ լինին բնաքն . և այնու եկեղեցիցին մեր զերծանին ի ձեռաց հերձուածողաց . քանզի ի ներքոյ Տաճկաց զոլով , ըզ հերձուածողն յեկեղեցեաց մերոց արտաքսելով , ոչ կարեմք մաքրել զմիրս եկեղեցի : Աւատի վերամայ մեղ այս միայն , զի զնոսին առ մեղ զարձուցանելով , մաքրիցեմք : Բայց եթէ մեք արա

տաքս ելցեմք , զմերն թողումք նոցին առ ի յաւիտեան մնալ անմարոր , և մեք մնացեալք առանց եկեղեցոյ թափառական և անկրօն լինիւր ի զուր : Եւ դարձեալ նաև այս յայտ է , զի յամենայն աեղիս մեծատունք և արք խոհեմք են ողղափառք , որք ի մէջ եկեղեցեաց և ի զրտնս մեծամեծաց՝ նորին են իշխողք և խօսողք : Խոկ յորժամ այսպիսի իշխողք ի մէջ եկեղեցոյ , ինքեանք զինքեանս արտափառոցին յեկեղեցեաց , ի մէջ եկեղեցեաց Հայոց մնան աղքատք և յիմարք՝ իշխողք : Զոր եթէ երբեմն պատահան վասն պատճառի ուրեմն կամցիցին ուղղափառք խօսիլ , խաճամուժ և տղէտ ամբոխն յուզեալք ի չար քահանայից , սկրանին աղղաղակել թէ , զաք որք ոչ հաւանիք և ոչ զայք յեկեղեցիս մերս : Վասն որոյ նոյնին եթէ հանապաղ զանայցին ի մէջ եկեղեցեաց , ոչ ոք կարէ ընդդիմանալ ընդդէմ նոցա , և զինչ և հրամայեցն կարեն ի կատար հասուցանել Տէրամբ : Եւ այսպէս սակաւ առ սակաւ կարելի լինի որբել և մարտրել զեկեղեցիք մեր , և ոչ եթէ ի բայց հեռանալով¹ :

4733 յապրիլի 14.

¹ Երանաշնորհ հիմաղրին այս դրութիւնը 1733ին զրի առնուուծ ըլլալով , 1879ին աշխարհքիս վրաց գտնուողքս կը տեսնալու , որ Միտիմարայ եկեղեցիները որբելու և մաքրելու յայսը բոլորովին պարագի լւած , և անոր համառակէ նոյն եկեղեցիները յաւիտեալ թող տալու վախը իւրօք ձևարտած է : Սակայն Աստուծոյ նախախնամութեամբ , և նորութիւն Օսմանեան Թեսուութեան շենք մնացեր թափառական և անկրօն . այլ եղեր եւր Համարակութիւն մը մեք առանձին եկեղեցիներով և նուիրաբետութեամբ , միայեալ Եկեղեցոյ զլիոյն հետ , և կոնանք ամիւլ և զարքանալ Աստուծոյ յաջողելովք : Կրնայ ուրեմն Միտիմարայ ոգին իւրամայք միաթմարութել երկնորէն սյս մեր վիճակին վայ , որն որ իւր կենդանութեանը թէպէտն պատշաճական , սակայն անկարելի կը համարէր :

ՕՐԵՈՒՅԹ

Այս տեմրակը ստանալ ուղօղ աստուածաբան վարդապետներն ու եկեղեցական պատմագիրները, որոնց համար մասնաւորապէս հրատարակուած է, կրնան հրատարակողէն ընդունիլ. կամ առանձին թղթով խնդրելով, և կամ բարեկամի մը ձեռօք:

*West 7: für ganz
Verlag*



116.

Անդրա

1992

ՀՀ Ազգային գրադարան



NL0337440

